№ 246 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 8 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1911 ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԵՐԵՔՇԱԲԹԻ, 8 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 246

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Նոյեմբերի 1-ից մինչև տարվայ վերջը 2 րուբլի։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԷՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս ստնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торговъ. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՆՈՆԻՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Աւտոմոբիլային հաղորդակցութեան Կովկասում
ԱՒՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ
Նոյեմբերի 2/15-ից 1911 թ.
ԲՈՐԺՈՄԻ, ԱԽԱԼՑԽԱՅԻ եւ ԱԲԱՍԹՈՒՄԱՆԻ միջև։

Բորժոմից Ախալցխա մեկնումը ամեն օր, երեկ. ժամը 4-ին։
Ախալցխայից Բորժոմ մեկնումը առաւօտեան ժամը 9-ին։
Շաբաթական մէկ անգամ, ուրբաթ օրերը, աւտոմոբիլը կը գնայ մինչև Աբասթուման և կը վերադառնայ հետևեալ օրը՝ շաբաթ, առ. ժամը 8-ին, մնալով նաև Ախալցխա առ. մօտ ժամը 9-ին։

ԳՆԵՐԸ
Բորժոմ—Աբասթուման՝ 5 րուբլի։
Բորժոմ—Ախալցխա՝ 3 րուբլի։
Ախալցխա—Աբասթուման՝ 2 րուբլի։

Բագաժի համար՝ բացի 1 պուդից՝ իւրաքանչիւր աւել պուդին 50 կ.։

(հ.հ.շ.կ.) առ. 1066. 4—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Երեկոյթների կարգը ձմեռային սեզոնին մէջ

Երեքշաբթի օրերը.—Հայոց ներկայացում։ Զինւորական երաժշտութիւն։ Սազանդար։ ՊԱՐԵՐ։
Հինգշաբթի օրերը.—Ռուսաց ներկայացում կամ զինւորական երաժշտութիւն։ Լոտօ։
Ուրբաթ օրերը.—Սինեմատոգրաֆ։ Լոտօ։
Շաբաթ օրերը.—Սազանդար։ Լոտօ։
Կիրակի օրերը.—Սինեմատոգրաֆ։ Զինւորական երաժշտութիւն։ Լոտօ։

Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան մուտքի համար վճարում են. երեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ և կիրակի օրերը—տղամարդիկ 1 ր., կանայք 50 կ., ուսանողները 25 կ.։ Ուրբաթ օրերը—տղամարդիկ 50 կ., կանայք և ուսանողները 25-ական կոպ.։

Այն հիւրերը, որոնք ներկայացման տոմսակ ունեն վերցրած՝ կլուբ մտնելու համար վճարում են—տղամարդիկ 50 կ., կանայք և ուսանողները 25-ական կոպ.։

Ներկայացումների սկիզբը ժամը ճիշդ 8-ին երեկոյեան։

Սինեմատոգրաֆների սկիզբը ժամը 9-ին երեկոյեան։

(հ.) առ. 994. 0—1

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ
Յ. ՄԻՐԱՔԵԱՆ
ՊԱՐԻԶԻՑ
Վերատեսուչ Ֆրանսիական Հանրապետութեան նախագահութեան EG. PIROU լուսանկարչատան—Պարիզում։
Ժամանակակից ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ
Սերգիեվսկայա, 4.
PHOTOGRAPHIE D'ART.

առ. 1055. 5—2

ФАБРИКИ
А.ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ
ИНТЕЛЛИГЕНТНЫЯ
ЦѢНА
25шт.15к.
10ш.6к.100ш.60к.

ПАПИРОСЫ
ЛЕВЪ
20шт.
5коп.
ФАБРИКИ А.ЭНФІАДЖІАНЦА

ПАПИРОСЫ
ЭКСТРА
15шт.
6 коп.
ФАБРИКИ
А.ЭНФІАДЖІАНЦА

100—61 662. առ. (հ. հ. կ.)

Բեռլինի համալսարանի
ԲԺԻՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։
Սրսկումներ նաև տուբերկուլինով։
Ընդունելութիւնը ամեն օր՝
առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Католическая ул. д. № 10.
(ա.օ.) առ. 989. 100—23

ԲԺԻՇԿ
Ռ. Ս. ԴԱՒԹԵԱՆՑ
Ներքին եւ ջղային հիւանդութիւններ
Ընդունելութիւնը (ցերեկվայ ժամը 12—1.
ամեն օր (երեկոյեան ժամը 5—7.
Հասցէն՝ Կոջուբեեվսկայա փող. № 22.
Ելիզավէտինսկայա փողոցից՝ № 44 տան անկիւն։
(հ.հ.կ.) առ. 243. 100—89

ԲԺԻՇԿ
Գր. ՄԱԿԱՐԵԱՆ
Ներքին եւ երեխայոց
հիւանդութիւններ
Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում՝ Գանովսկայա փողոց, տուն Սէյլանովների, № 18, տելեֆոն 615.
Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(հ.հ.կ.) առ. 819. 100—27

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին։ Պլոմբ, արհեստական ատամներ իւրաքանչիւրը 1 րուբլի, և այլն։
Աշակերտներին և ծառայողներին 50% զեղչ։
Ընդունելութիւնը առ. ժամը 9—2-ը և 4—7-ը երեկ.
Միքայէլեան փող. № 6, մուտքը պերեուլկայից։
(հ.հ.կ.) առ. 876. 50—26



Ծախվում են անարժէք կեղծիքներ։
Իսկական ֆորմանի իւրաքանչիւր արկղիկը պէտք է ունենայ հետևեալ ֆիրման. Դրէզդէնի Քիմիական Լաբորատորիա Լինգնէրի, Դրէզդէնում։
(23,գ.5) (М.358691/358699) 1008. 3—1

ԵՐԿՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ ՅՈԲԵԼԵԱՆ

Այսօր Ռուսաստանը տօնում է մի գրական-կրթական յոբելեան։

Դա նրա առաջին խոշոր մտաւոր մշակի՝ Լոմոնոսովի՝ ծննդեան երկհարիւրամեակն է։

Լոմոնոսովը ինքը իր անհատականութեամբ մի հասարակական նոր երևոյթ էր Ռուսաստանում։

Հասարակ ձկնորսի որդի, ծնված խորին հիւսիսում՝ Սպիտակ ծովի մօտ, առանց նիւթական միջոցների և աջակցողների, նա խիզախ մի գործի է ձեռնարկում։ Որոշում է գնալ ուսման՝ յանձն առնելով ամեն մի զրկանք։ Եւ ճանապարհ է ընկնում ոտքով դէպի մայրաքաղաք։

Եւ մենք տեսնում ենք Լոմոնոսովին Մոսկվայում, Կիեվում, Պետերբուրգում, Գերմանիայում, Հոլլանդիայում և վերջումը դարձած պրոֆեսոր համալսարանում։

Լոմոնոսովի կեանքը, Լոմոնոսովի ձգտումը դէպի ուսումը, Լոմոնոսովի անհատական եռանդը և տոկունութիւնը մի փայլուն օրինակ էին ինքնագործութեան և ուժեղ ձեռնարկու ոգու։

Եւ Լոմոնոսովը գրաւում է հիացած զմայլմունք դէպի իր անձնաւորութիւնը թէ իր հայրենակիցներից և թէ օտարներից։

Լոմոնոսովը առաջին ռահվիրաներից մէկն է այն մտաւոր անդաստանում, որ յետոյ բեղմնաւորվեց այնքան պերճ կերպով և ստեղծեց նոր Ռուսաստան իր տաղանդներով և ընդունակութիւններով, իր անմահ գրական երկերով և իր գիտական գործերով, որոնցով այժմ պարծենում է Լոմոնոսովի հայրենիքը։

Ռուսական գրականութիւնը յանձին Լոմոնոսովի ունի իր ներկայ գրական լեզուն առաջին մշակողին, որը յետ մղեց հին մաշված և խորթ գրական լեզուն և նրա փոխարէն հաստատեց նորը, բնականը, կենսականը, որը զարգացաւ, ճոխացաւ և այժմ ներկայանում է իբրև հարուստ մի գանձարան։

Լոմոնոսովի ծննդեան 200-ամեակի առիթով յայտնում ենք ռուս հասարակութեանը և գրականութեանը մեր խորին յարգանքը դէպի Լոմոնոսովի անմահ յիշատակը, ընդգծելով որ Լոմոնոսովները, իբրև մտաւոր բարոյական ռահվիրաներ, իբրև լոյսի ներկայացուցիչներ, հանդիսացան կախարդիչ աստղեր, որոնք գրաւեցին սրտեր դէպի ռուս ազգի մտաւոր-բարոյական մեծութիւնը նաև այն բոլոր ազգերից, որոնց վիճակվել է կենակից լինել նրան։

Ա. Քալանթար

ՉԻՆԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
5 և 6 նոյեմբերի

Տօկիօ.—Պաշտօնական լրագրում հրատարակված է Չինաստանի հետ կապված պայմանագիրը կորէական և մանջուրական երկաթուղիները Եալու գետի կամուրջով միացնելու մասին։ Սահման ճանաչվում է կամուրջի միջատեղը։ Զօրքերի տեղափոխութիւնը արգելված է բացի պայմանագրով սահմանվածներից։

«Ջիճիպօն» նախատեսում է ներկայ կաբինէտի անկումը, որպիսի հանգամանքը, լրագրի կարծիքով՝ դժբաղդութիւն կը լինէր ազգի համար ի նկատի ունենալով Չինաստանի արդի կացութիւնը։

«Խօցի-Շիմբունը» պահանջում է միջամտել չինական գործերին, եթէ Իւանշիկայը չը խաղաղեցնի երկիրը անմիջապէս։ «Ջիճիի» կարծիքով միջամտութիւնը հնարաւոր է միայն միւս մեծ պետութիւնների հետ։ «Տօկիօ Ասախի» հաշւով ներկայումս Չինաստանի ջրերում գտնվում են 24 եապօնական ռազմանաւ։

—

Շանխայ.—Նանկինից տեղեկութիւններ չը կան, սակայն լուրերի համաձայն՝ ապստամբների դրութիւնը բարելաւվում է։ Լուրերին նայած՝ Անցինում, որ Անխոյի գլխաւոր քաղաքն է՝ դաւադիրների շրջանում կռիւ է։

Վուսունում կանգնած են երկու անգլիական ռազմանաւ։

—

Մուկդէն.—Տեղական կոմիտէն անվաւեր յայտարարեց կենտրոնական կառավարութեան բոլոր կարգադրութիւնները։ Փոխարքայի պաշտօնական յարաբերութիւնները Պէկինի հետ խզված են։

Տեանցզինում հաստատվեց մի ընկերութիւն՝ Չինաստանում նոր պետական կազմ հաստատելուն նպաստելու համար։ Նախաձեռնողներն են սահմանադրական կուսակցութեան ներկայացուցիչ Եանդուն, որ հրաժարվեց ժող. լուս. մինիստրի պաշտօնը ստանձնելուց, և հանրապետական կուսակցութեան ներկայացուցիչ Վանչժօամինը, որ նախկին յեղափոխականներից է և 1910 թ. մահափորձ կատարեց պետական խնամակալի կեանքի դէմ։ Ընկերութեան հիմնական գաղափարն է աջակցել շուտափոյթ վերջ դնելու զինված կռւին և խաղաղ ճանապարհով հաշտութիւն կայացնել կռւող կողմերի միջև։ Ընկերութեան դեւիզն է՝ Չինաստանի անբաժանելիութիւնը։ Հիմնական ենթադրութիւն գոյութիւն ունի, թէ ընկերութիւնը դրամական նպաստ է ստանում կառավարութիւնից։

Լուրերի համաձայն, Իւանշիկայը յայտնել է կայսրուհուն, որ մայրաքաղաքում գտնվող 3,000 զինւորներով նա երաշխաւորում է կարգ ու կանոնը պահպանել։

—

Պէկին.—Նոյեմբերի 1-ի հրովարտակով պետական խնամակալը տալու է հաւատարմութեան երդում սահմանադրութեանը։

Ցզեանսու և Չժէցզիան նահանգների ժամ. կառավարութիւնները Շանխայում գումարում են համաչինական խորհրդակցութիւն գաւառների պատգամաւորների մասնակցութեամբ Չինաստանի ապագայ պետական կազմի հարցը լուծելու համար։ Ամերիկայում ապրող չինացիները բացարձակ կողմնակից են ֆեդերատիվ հանրապետութեան։

Խանկօուից, չինական աղբիւրներից ստացված տեղեկութիւնների համաձայն, հիւսիսային զօրքերը պարտութիւն են կրել. գլխաւոր ուժերը նահանջել են դէպի Սիեականխան կայարանը, որ գտնվում է Խանկօուից 60 վերստ հեռաւորութեան վրա։ Լուրերի համաձայն Շանսի յեղափոխական զօրքերը գրաւել են Խուալուսիան կայարանը։

Լրագիրները յայտնում են, որ Կուկուանի փոխարքայի ժամ. պաշտօնակատար գեներալ Դուանչժիկույը սպանվել է։

ԹՈՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
5 և 6 նոյեմբերի

Տրիպօլիս.—Թիւրքական դիրքերը մեծ վտանգի մէջ են՝ Մէջէնին գետի վարարումից։

Ծովային փոթորկի պատճառով պատերազմական նաւերը և շոգենաւերը խարիսխները վերցրին։

Թէև շոգենաւերով ուտեստեղէն է բերված ազգաբնակութեան համար, սակայն հեղեղի պատճառով անկարելի է իջեցնել։

Խօմսում, Բէնգազիում և Տօբրուկում դրութիւնը անփոփոխ է։ Դէրնայում եղաւ նոր կռիւ, որի մէջ իտալացիները կորուստ չունեցան, իսկ թիւրքերից վիրաւորվեցին մի քանի զինւոր։

—

Կ. Պօլիս.—«Թանինի» ասելով, մեծ պետութիւնները վստահեցրել են Բ. Դրան, որ իտալական պատերազմական գործողութիւնները կը տարածվեն սոսկ մի քանի կղզիների վրա Արշիպելագոսում։

—

Հռոմ.—Ստեֆանին հերքում է այն տեղեկութիւնները, թէ իբր մտադրութիւն կայ կնքել ներքին ու արտաքին փոխառութիւններ, և յայտնում է, որ պետական գանձատան մէջ, չը նայած պատերազմական զգալի ծախքերին, ազատ գումարը կազմում է 500 միլիօն։

10 կամաւոր օդագնացներ մեկնեցին Կիրէնաիկէ։

—

Բերլին.—Գերմանական մամուլի պետական դաշնակցութիւնը վճռական կերպով բողոքում է իտալական մամուլի այն յայտնածի դէմ, իբր Տրիպօլիսում գտնվող գերմանացի թղթակիցները իրանց թղթակցութիւնների մէջ ճշմարտութեան դէմ մեղանչել են։ Միատեսակ դատապարտվում է Ջիօլետտիի այն յայտարարութիւնը, թէ գերմանական լրագիրները Իտալիայի գործողութիւնները գնահատելու մէջ ղեկավարվում են ֆինանսական բնաւորութեան նկատումներով։

—

Կ. Պօլիս.—Բ. Դուռը տեղեկութիւն առաւ, որ Սալը-բազարից ոչ հեռու, Տրիպօլիսի շրջակայքում, կռիւ է տեղի ունեցել։ Թիւրք-արաբական զօրքերը գրաւել են իտալական դիրքերը։ Իտալացիները տուել են 100 սպանված, 4 գնդակացիր և երկու թնդանօթ։ Նաւերից արձակված կրակը հարկադրել է օսմանցիներին յետ նահանջել։

Բէնգազիից եկած երկրորդ պատգամաւոր Քօմէր-Մանուր փաշան յայտնում է, թէ օսմանեան զօրքերի դրութիւնը լաւ է. նրանք վնասներ են կրում միայն նաւերի թնդանօթաձգութիւնից։ Յոյս կայ, որ եթէ նաւատորմը հեռանայ փոթորկի պատճառով, քաղաքը ընկնէ դարձեալ թիւրքերի ձեռքը։

Օսմանեան գործակալութեան տեղեկութիւնների համաձայն, նոյեմբերի 4-ին Տրիպօլիսում թիւրքերը, օգտվելով անձրևներից, ստիպել են իտալացիներին յետ նահանջել և ձեռք են ձգել 6 թնդանօթ։

ՍԵՐԲԻԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐԸ ՊԱՐԻԶՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
5 և 6 նոյեմբերի

Պարիզ. — Սերբիական թագաւորը, Ֆալիէրը, Կալիօն և սերբիական դեսպանը ներկայ եղան պաշտօնական օպերային ներկայացմանը, որ տրվում էր ի պատիւ թագաւորի։ Հասարակութիւնը սրտանց ողջունում էր թագաւորին և նախագահին։

Ժամը 4-ին սերբիական թագաւորը վերջին անգամ այցելեց Ֆալիէրին։

Պետր թագաւորը 10,000 ֆրանկ նուիրեց Պարիզի աղքատ ազգաբնակութեան օգտին։

Թագաւորը այցելեց նաև Մեծ Իշխանուհի Մարիա Պավլօվնային և գնաց ռուսաց դեսպանատան եկեղեցին։ Պատարագից յետոյ թագաւորը արտաքին գործերի մինիստրութեան մէջ նախաճաշ տուեց։

Երեկոյեան ժամը $6^1/_2$-ին թագաւորը մեկնեց Պարիզից։ Կայարանում ճանապարհ դրին Ֆալիէրը, մինիստրները, պալատի և սենատի նախագահները։

—

Պարիզ. — Սերբիական թագաւորը սերբիական միսսիայում ճաշ տուեց ի պատիւ Ֆալիէրի։

Սերբիական թագաւորը և Ֆալիէրը այցելեցին աէրօդրոմը Բուադարսում, յետոյ Սէն-Սիրի զինւորական վարժարանը։ Թագաւորը յիշեց իր աշակերտ եղած օրերը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. գործ.)
5 և 6 նոյեմբերի

Թէհրան.—Կառավարութեան տեղեկութիւնների համաձայն, բախտիարները Բորուջիրդի մօտ ջարդել են Սալար-ուդ-Դովլէին, որ փախել է, ունենալով 500 սպանված և վիրաւոր։ Բախտիարները հետապնդում են նրան։ Բախտիարները կորցրել են 25 սպանված և 4 վիրաւորված։

—

Ջուլֆա.—Ուրմիայից հաղորդում են, որ անջումանում տեղի ունեցաւ դասային ներկայացուցիչների ամկալի նիստը Սամադ-խանի արշաւանքի առիթով։ Զօրամասերի հրամանատարները դէմ են արշաւանքին։ Վճռված է Սալմաստի ճանապարհին գտնվող զօրաման առ այժմ ուղարկել Սալմաստ։

Սուուջ-Բուլաղ է եկել մի թիւրք պօրուչիկ՝ ասկէրներով, և արգելում է ներմուծել պարսկական ապրանքներ առանց մաքսի։

Երկրորդ կովկասեան հրացանաձիգ վաշտը մտաւ Թաւրիզ փոխարինելու այնտեղ գտնվող առաջին վաշտին։

Խօյից 20 վերստ հեռաւորութեան վրա քիւրդերը յարձակվել են կօզակների վրա։ Հրացանաձգութեան մէջ երեք գնդակներով վտանգաւոր վիրաւորված է կրծքից օֆիցեր Բիչերեախօվը։

—

Ջուլֆա.—Շահի կողմնակից Մարանդի նահանգապետ Շուջա-Նիզամը 200 ձիաւորներով յարձակվեց Ալամդար-Գերգեռ գիւղի վրա, որ մօտ է Ջուլֆային։ Երկրորդ օրն է՝ հրացանաձգութիւն է։

—

Բոմբէյ.—Աուդրօխիլխանդի երկաթուղու կառավարչին յանձնարարվեց պարզել, թէ արդեօք հնարաւոր է երկաթուղի կառուցանել Կարաչիից մինչև Պարսկական նեղուցը։ Եթէ նախագիծը իրականանայ, այդ կը լինի Հնդկաստանի և Եւրոպայի միջև որոշված հնդկա-պարսկական երկաթուղու առաջին օղակը։

Ստոկհոլմ.—Կրկին եօթն օֆիցէրների թոյլ տրվեց մտնել ծառայութեան Պարսկաստանում՝ պարսկական ժանդարմէրիան վերակազմելու համար։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

5 և 6 նոյեմբերի

Պետերբուրգ.—Հրաման ծովային վարչութեան նոյեմբ. 4-ից. «Նոյեմբերի 1-ին ես արժանացայ ստանալու Նորին Կայսերական Մեծութիւնից հետևեալ ամենաողորմած հեռագիրը. «Խնդրում եմ ձեզ, Իվան Կոնստանտինովիչ, ուշադրութիւն մի դարձնէք թէ ձեր եւ թէ ծովային վարչութեան դէմ ուղղված զանազան անհեթեթ եւ զրպարտիչ յարձակումների վրա։ Շարունակեցէք անյողդողդ եւ հաստատ՝ նաւատորմի վերակազմութեան գործը, վայելելով իմ վստահութիւնն ու յարգանքը դէպի ձեզ եւ դէպի բարեմիտ նաւաստիները։ ՆԻԿՕԼԱՅ»: Ցիշեալ հեռագրին ուղարկվեց հետևեալ ամենահպատակ հեռագիրը. «Ձեր Կայսերական Մեծութեան ամենաողորմած հեռագիրը, որի մէջ Դուք, Թագաւոր, ինձ վստահութիւն էք յայտնում, ամենամեծ պարգև է ինչպէս ամեն մի անկեղծ հպատակի, այնպէս և Ձեր հաւատարիմ սպասաւորիս համար։ Նա ամրապնդում է իմ ոյժերի աղբիւրը հաստատ ու կայուն, ուշք չը դարձնելով և ոչ մի արգելքի վրա՝ շարունակել Ձեր Մեծութեան ինձ յանձնած նաւատորմի վերականգնումը։ Ծովակալ Գրիգորովիչ»։ Վերոյիշեալի մասին յայտնում եմ ի գիտութիւն ծովային վարչութեան և նաւատորմի»։

—

Կ. Պօլիս.—Կէսօրվայ ժամը 4-ին մեկնեց արտակարգ դեսպանութիւնը Լիվադիա։

—

Լիվադիա.—Եալտա հասաւ Թիւրքաց արտակարգ դեսպանութիւնը Թագաւոր Կայսրին սուլթանի անունից ողջունելու համար։ Դեսպանութեան մէջ են՝ ծովային նախկին մինիստր Մահմուդ-Մուխտար փաշա, սուլթանի առաջին կամերհէր Լիւթֆի-բէյ, սուլթանի ֆլիգել-ադիւտանտ Ջիա-բէյ, դեսպանատան քարտուղար Բյակ-բէյ։ Նաւահանգստում դրված էր պատուաւոր պահակախումբ երաժշտութեամբ։ Դեսպանութեանը ընդունեց Նորին Մեծութեան հերթապահ ֆլիգել-ադիւտանտ Արսենիէվը, Տաւրիկեան նահանգապետ արարողապետ կոմս Ապրակսինը, Եալտա քաղաքի զօրահրամանատար գ.-մ. Դումբաձէն, ազնուականութեան գաւառական պարագլուխ կամերհէր Պօպօվը, քաղաքագլուխ ի. գ. խ. Բրինիցկի և այլք։ Դեսպանութիւնը իջևանեց «Россія» հիւրանոցում, ուր Բարձրագոյն պալատի կողմից նրա համար տեղ է պատրաստված։

—

Ալէքսանդրիա.—Եկաւ Թիւրքաց յատուկ պատգամաւորութիւնը սուլթանի աւագ որդու գլխաւորութեամբ՝ անգլիական թագաւորին և թագուհուն դիմաւորելու համար։

—

Լոնդոն. — «Թայմսին» հաղորդում են Սիդնէյից, որ Կվինսլենդի կառավարութիւնը խնդրեց ռուսաց հիւպատոսարանից միջոցներ ձեռք առնել դադարեցնելու գաղթականութեան հոսանքը Սիբիրից, որովհետև գաղթականները արդէն լի են։ Արտաքին գործերի մինիստրութիւնը հաւաստիացրեց հիւպատոսին, թէ գաղթականները համարվում են ցանկալի տարր, և խոստացաւ աջակցել նրանց բնակեցնելու հիւսիսային նահանգներում։

—

Բերլին.—Տեղիս գրական-գեղարուեստական ընկերութիւնը երեկոյթ կազմեց ի պատիւ Տօլստոյի։ Զուտ արդիւնքը յատկացվում է Տօլստոյի անուան թանգարանի օգտին։

—

Վիէննա. — Ֆինանսների մինիստր Մայէրը պաշտօնանկ եղաւ խնդրագրով։ Միաժամանակ պաշտօնից հեռացաւ Գալիցիայի մինիստրը։ Չեխ Բրաֆը նշանակվեց երկրագործութեան մինիստր, պատգամաւոր Դլուգօշը՝ Գալիցիայի մինիստր։

—

Լօրիան.—«Կուրբէ» զրահապատ յածանաւի բանւորների գործադուլը շարունակվում է։ Զօրքերին հրամայված է պատրաստ լինել։

Զինապահեստի բանւորների գործադուլը վերջացաւ։

—

Սալօնիկ.—Ցունական ապրանքների բօյկօտը վերջնականապէս դադարեց։

—

Բուէնոս-Այրէս.—Փօթօրիկը սոսկալի աւերածութիւններ գործեց։ Ամբողջ երկրում հեռագիրը դադարել է գործելուց։ Մի գնացք գծից դուրս եկաւ։

—

Սօֆիա.—Ազգային ժողովում գահական ճառին պատասխանելու առիթով ծագած վիճաբանութիւններին, ընդդիմախօսելով բալկանեան ֆեդերացիայի գաղափարի առիթով արտասանված ճառին, Մալինովը խօսեց յօգուտ ռէալ քաղաքականութեան։ Լիբերալների լիդէրը կշտամբեց կառավարութեանը, որ վճռական կերպով չէ պաշտպանում մակեդոնական բուլղարներին, և յայտնեց, թէ Թիւրքիայի հետ խաղաղ քաղաքականութիւն պահպանել չափազանց դժուար է. դա անհետևանք է։

—

Սօֆիա.—Ազգային ժողովում՝ մեծամասնութեան ծափահարութեան տակ ժողովրդական-լիբերալ կուսակցութեան պարագլուխը յայտնեց, որ խաղաղասիրութիւն Թիւրքիայի նկատմամբ թոյլատրելի է այժմ, ինչպէս մակեդոնացիների յուսահատ դրութիւնը բարուոքելու վերջին մի փորձ. խաղաղ քաղաքականութեան պարտութեան դէպքում հարկ կը լինի գործել այլ կերպ։

—

Վիէննա.—Գաուչի կաբինետը այս օրերս վերականգնվելու է լիակատար կազմով։ Կաբինետի մէջ մտնում է երկրորդ չեխ Բրաւը երկրագործութեան մինիստրի պորտֆէյլով. Գալիցիայի գործերի մինիստր Զալեսկին ստանձնում է ֆինանսների մինիստրի պաշտօնը. Գալիցիայի գործերի մինիստր նշանակվում է լեհական ժողովրդական կուսակցութեան փոխ-նախագահ Այսէնշը։

«Կոր. Բիւրօն» հերքում է արտասահմանեան մամուլում երևացած լուրերը Բոսնիայում և Հերցէգովինայում զօրաժողով կատարելու մասին։

—

Վաշինգտօն. — Մեքսիկայի սահմանագլխին գտնվող ամերիկական զօրքերին պատուիրագրվեց պատրաստ լինել։

ՀՌՈՄԻ ՊԱՊԸ ԵՒ ՕՐՄԱՆԵԱՆԻ ԳԻՐՔԸ

Եւրոպական լրագիրները հաղորդում են, որ Հռոմի պապ Պիոս X արգելված գրքերի ցուցակի (ինդէքսի) մէջ է մտցրել Օրմանեան սրբազանի գիրքը՝ «Հայոց եկեղեցին և իր պատմութիւնը, վարդապետութիւնը»։ Ինչպէս յայտնի է, ինդէքսի մէջ են մտնում այն գրքերը, որոնք նկատվում են իբրև հերձուածողական և հակառակ կաթօլիկ եկեղեցու վարդապետութեան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹ. ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

I

Թիֆլիսի թեմի պատգամ. ընտրութիւն

Կիրակի, նոյեմբերի 6-ին, հայոց առաջնորդարանում, ցերեկվայ ժամը $12^1/_2$-ին, Թիֆլիսի թեմի ժամանակաւոր կառավարիչ Եփրեմ եպիսկոպոսը բացեց Թիֆլիս քաղաքի և թեմի կողմից ընտրված պատուիրակների ժողովը, որ սրբազանի առաջարկութեամբ յարգեց ի Տէր հանգուցեալ ամենայն հայոց կաթողիկոս Իզմիրլեանի յիշատակը ոտքի կանգնելով։

Ապա ստուգվեց պատուիրակների ցուցակը և երևաց, որ ներկայ են քաղաքի և գաւառական պատուիրակներ ընդամենը 98 հոգի, բացակայում են 9։

Սրբազանի առաջարկութեան համաձայն, ժողովը ձեռնարկեց նախագահի ընտրութեանը գաղտնի քուէարկութեամբ։ Նախ տրվեցին անուններ՝ Հ. Առաքելեան, բժշ. Նաւասարդեան, Ս. Յարութիւնեան և Մ. Դօլուխանեան։ Վերջին երեքի հրաժարվելու պատճառով քուէարկվեց միայն Հ. Առաքելեան, որը և ընտրվեց ժողովի նախագահ, ստանալով 67 սպիտակ ու 29 սև (2 հոգի մնացին ձեռնպահ)։

Նախագահ Հ. Առաքելեան դիմելով ժողովին ասաց.

«Յարգելի պատուիրակներ Թիֆլիսի թեմի։ Խորին շնորհակալութիւն յայտնելով ձեզ այն մեծ պատւի համար, որ ձեր քուէով կոչեցիք ինձ այս պատկառելի ժողովի ատենապետութեան աթոռին, ես պէտք է ասեմ, որ այդ պատիւը չեմ վերագրում իմ անձնաւորութեան, այլ այն մեծ և վեհ գաղափարին, որին ծառայելու կոչված ենք այսօր մենք այստեղ, այն է ընտրել մեր ազգային և ժողովրդական եկեղեցու համար մի արժանաւոր պետ և յաջորդ ս. Գրիգոր Լուսաւորչի։ Դուք ամենքդ ներկայացնում էք այսօր լայնատարած Թիֆլիսի թեմի ամբողջ հայ ժողովրդի ձայնը և ձեր քուէով պէտք է ցոյց տաք, թէ ում դուք համարում էք արժանաւոր՝ լինելու ժողովրդի ներկայացուցիչը այն մեծ և համազգային ընտրողական ժողովում, որ գումարվելու է դեկտ. 11-ին Էջմիածնում՝ ընտրելու համար ամենայն հայոց կաթողիկոս և եկեղեցու հովուապետ։ Ես ոչ մի բոպէ տարակոյս չունեմ, որ ամենքդ հետևելու և անսալու էք ձեր խղճին, ձեր ներքին համոզմունքին և առաջնորդվելով միայն այդ խղճով և ներքին համոզմամբ, կատարելու էք ձեր ընտրութիւնը։ Կրկին շնորհակալութիւն յայտնելով ձեզ, անցնում եմ ժողովի օրակարգին և առաջարկում եմ առաջ ընտրել ժողովի համար երկու քարտուղար»։

Բացարձակ քուէարկութեամբ ընտրվեցին քարտուղարներ պ. պ. Ստեփան Մալխասեան և դոկտ. Ար. Շխեան։

Այնուհետև նախագահը յայտարարեց, որ ամենից առաջ ի հարկէ օրակարգում թեմական պատգամաւորի ընտրութեան հարցն է, սակայն միևնոյն ժամանակ նա կարևոր է համարում լսել ժողովի կարծիքը, թէ արդեօք կարիք կայ խօսելու կաթողիկոսական թեկնածուների մասին՝ թէ ոչ։ Նախագահը անձամբ կողմնակից է մտքերի փոխանակութեան, պայմանով միայն՝ որ ամեն մի հոսանքի ներկայացուցիչ պարտաւորապէս ծանրանայ իր ընտրելի դրական կողմերի, նրա արժանիքների վրա։

Յով. Խաչատրեան, հիմնվելով թեմական ընտրութիւնների կանոնների № 7-ի վրա, այսօր կաթ. ընտրելիների մասին առհասարակ խօսելը աւելորդ է գտնում։

Այս առաջարկութեանը միանում են Ս. Յարութիւնեան, Համբարձումեան, Յ. Մեղուրեան։ Մինչդեռ գաւառական պատուիրակները կողմնակից են, որ լինի մտքերի լայն շփումն իւրաքանչիւր կաթողիկոսացուի շուրջ, որպէսզի գաւառական պատուիրակները գան որոշ վճռի այս կամ այն թեկնածուի վերաբերութեամբ։ Այս միտքը պաշտպանում են Ա. Թադէոսեան, Յ. Ալիխանեան, Աբրահեան, Գրիգորեան։

Յով. Աֆրիկեան եւ Սպենդիարեան նկատում են, որ գաւ. պատուիրակները արդէն պատրաստված, որոշ մանդատով, եկել են ներկայանալու այսօր՝ արտայայտելով իրանց ընտրող ժողովրդի կամքը և ոչ թէ մի կէս-ժամեայ խօսակցութիւնից յետոյ դրական որոշման են յանգելու։

Բժ. Մայսուրեան առաջարկում է գաւ. պատուիրակների համար թոյլ տալ պարզաբանվել զանազան հոսանքների ներկայացուցիչներին։

Գաւ. պատուիրակ Թեխմիշեան առաջարկում է տալ պատգամաւորի պաշտօնի համար տարբեր ուղղութեան անձանց անուններ, որոնցից իւրաքանչիւրն էլ կարող է արտայայտվել իր կաթ. ընտրելի վերաբերութեամբ։

Նախագահը այս առաջարկը քուէարկում է, որ և ընդունվում է համարեա միաձայն։

Ս. Յարութիւնեան ասում է, թէ կարող է պատահել, որ առաջարկված կանդիդատները զուգէ հաւակշիռ լինեն. այդ դէպքում հարկաւոր է թոյլ տալ խօսելու նաև հակառակորդ կողմի ներկայացուցչին։

Տրվում են Յ. Սպենդիարեանի, բժ. Ա. Շխեանի, Ալ. Քալանթարի, Լևոն Մանթաշեանի Ս. Յարութիւնեանի և Ա. Բիշմիշեանի անունները։

Նախագահի հարցին՝ Լ. Մանթաշեան, Ա. Բիշմիշեան և Ալ. Քալանթար խնդրում են իրանց անունները հանել. իսկ Ս. Յարութիւնեան, պատճառաբանելով որ ինքը արդէն ընտրված է պատգամաւոր Երուսաղէմի թեմի կողմից, հրաժարվում է նոյնպէս։

Սպենդիարեան և Շխեան համաձայնվում են քուէարկվել։

Նախագահը յայտնում է, որ թեմական պատգամաւոր կը համարվի ձայների մեծամասնութիւն ստացողը, երկրորդը կը լինի անձնափոխանորդ։

Դարձեալ փոքր ինչ խօսվում է կաթ. ընտրելիների վերաբերմամբ մտքերի փոխանակութիւն ունենալու մասին։ Բժշկ. Նաւասարդեան առաջարկում է թոյլ տալ բացի Սպենդիարեանից և Շխեանից խօսել առարկողներից մէկին ըստ հերթեան իր թեկնածուի մասին։ Բժ. Շխեան դէմ է, ասելով որ աւելի արդարացի կը լինէր, եթէ ժողովը թոյլ տար պարզաբանվել բոլոր հոսանքների ներկայացուցիչներին։

Ընդունելով որ արդէն որոշումը չը պէտք է խախտվի, ժողովի մեծամասնութիւնը խնդրում է Սպենդիարեանին խօսել իր թեկնածուի մասին։

Յ. Սպենդիարեան, կանգնելով ատենապետական սեղանի մօտ, արտասանում է մօտաւորապէս հետևեալ ճառը.

«Իմ խօսքերը կարճ է լինելու։ Խղճի մտքով, ներքին համոզմամբ, սիրելով իմ եկեղեցին ու ազգը, ես պէտք է յայտնեմ, որ միակ արժանաւոր թեկնածուն ամենայն հայոց կաթողիկոսի բարձր պաշտօնի համար ես համարում եմ սրբազան Մաղաքիա արքեպ. Օրմանեանին։

«Այն նոր հրասթափումից յետոյ, որ զգաց հայ ժողովուրդը Խրիմեանի մահից յետոյ, անհրաժեշտ երևաց մի հանգամանք, որ հայոց եկեղեցու պետը լինելու է անպայման վարչական անձն, խելօք ու կամքի ոյժի տէր անձնաւորութիւն։ Թիֆլիսի թեմը ես ծարաւի է, որ կաթողիկոսական պատասխանատու պաշտօնի համար ընտրվի արժանաւոր մարդ։ Պէտք է ասել, որ թեմիս ժողովուրդը գիտակցաբար վերաբերվեց դէպի կաթողիկոսական խնդիրը, և այսօր մենք կարող ենք վստահ ասել, որ մենք յիրաւի ժողովրդական ընտրեալներ ենք։

«Բայց, պարոններ, ոչ մէկը մեզանից կաթողիկոսական հարցից ոչ մի անձնական ակնկալութիւն չունի։ Առաջարկելով Օրմանեանին ի գահ ամենայն հայոց կաթողիկոսի վեհ պաշտօնին, մենք ղեկավարվում ենք ի նկատի ունենալով Օրմանեանի անցեալ արդիւնաւոր գործունէութիւնը։ Յիշեցէք Նրա զանազան ժամանակներում վարած ծանր պաշտօնները իբրև Երզրումի առաջնորդ, իբրև Արմաշի դպրեվանքի տեսուչ և վանահայր և իբրև Թիւրքահայոց պատրիարք։ Եւ եթէ մարդ խղճով քննէ այդ բովանդակ գործունէութիւնը, կը համոզվի, որ նա իսկապէս վարչական անձն է։ Բացի դրանից՝ Նրա առաւելութիւնն է նաև կրթական ցենզը. բաւական է ասել, որ նա աւարտել է համալսարանի երեք ֆակուլտէտներ՝ փիլիսոփայական, իրաւաբանական ու աստուածաբանական։ Այդ ասպարէզում նա մրցող չունի։ Օրմանեան իր գիտական պաշարից իր լուման տուել է հայ մատենագրութեան։ Նրա հռչակը բացի մեր մօտից, տարածված է և արտասահմանում։ Արևելագէտ Հերցէլը հրճուանքով է խօսում Օրմանեանի մասին, որի մօտ անցկացրած մի քանի օրերը նա երբեք չէ մոռանալու։ Պարոններ, Օրմանեանը իրաւ արտաքոյ կարգի յատկութիւնների տէր անձնաւորութիւն է։

«Ապա Նրա հռետորական տաղանդը։ Նրա բարոյագիտական քարոզները այսօր էլ յիշելի են լսողներին։

«Չերկարելով կասեմ, որ ամեն մի գիտակից հայ պէտք է խղճի մտօք կշռէ այդ ամեն արժանաւորութիւնները և այնպէս իր քուէն տայ։ Եթէ Օրմանեանի դէմ լինէր մի ուրիշ մրցակից, ես կը խօսէի նրա մասին նոյնպէս, սակայն այդպիսին չը կայ։

«Ներկայ պարագաներում, պարոններ, հայոց եկեղեցին իր աննորմալ դրութիւնից կարող է հանել և վերակարգել միմիայն արժանաւոր կաթողիկոս Օրմանեան սրբազանը»։ (Ծափահարութիւններ)։

Բժ. Արտ. Շխեան միանգամայն միանում է Սպենդիարեանի ասածներին։

Սրանից յետոյ դարձեալ հակաօրմանեանականները պահանջում են թոյլ տալ իրանց ներկայացուցչին խօսել։

Նախագահը՝ զիջելով թոյլ է տալիս միայն ուսուցիչ Յ. Ալիխանեանին դրուատել իր կաթ. ընտրելիին։

Ալիխանեան ասում է, թէ Օրմանեանը առաջարկվում է լոկ ազգաբնակութեան մի քանի խաւերի կողմից, որոնք այսօր հանգամանքների բերմամբ մեծամասնութիւն են կազմում։ Սակայն իսկական ժողովուրդը չունի իր ներկայացուցիչը։ Ժողովուրդը անկարող եղաւ ամենայն հայոց կաթողիկոսի պաշտօնի համար իր արժանաւոր անձը առաջարկել։ Ուստի Օրմանեան երբեք չէ կարող ճանաչվել իբրև ազգի ընտրեալ։ Ալիխանեան իր ճառը վերջացնում է՝ «Ժողովուրդը միայն մի բան կարող է ձեզ ասել.—Դուք թաղեցէք ձեր մեռեալներին...»։

Յ. Սպենդիարեան բողոքում է և խնդրում է արձանագրել, որ պարոնը դրժեց իր խոստումը և զանցառու գտնվեց ատենապետի պայմանից, չը խօսելով իր թեկնածուի դրական յատկութիւնների մասին։

Ախալցխայի թեմի պատուիրակ Թեխմիշեան բուռն բողոքում է Ալիխանեանի այն խօսքերի դէմ, թէ ներկայ ժողովին մասնակցողները իսկական ժողովրդական ներկայացուցիչներ չեն կարող համարվել։ Իրան Թէխմիշեանին և իր ընկերոջը—Արաբեանին ընտրել է Ախալցխայի ամբողջ թեմի ժողովուրդը և նրանք համարվում են այդ ժողովրդի իսկական ներկայացուցիչները։ Իսկ Ալիխանեաններն են, որ չահագործում են ժողովրդի անունը։

Ախալցխայի պատուիրակներ Արաբեան և Թեխմիշեան ժողովի ուշադրութիւնն են հրաւիրում այն անարդարութեան վրա, որ կայ Թիֆլիս քաղաքի և գաւառական պատուիրակների միջև ըստ թւի։ Մինչ Թիֆլիսում մի եկեղեցու համայնք տալիս է 3 պատուիրակ, մի ամբողջ գաւառական ազգաբնակութիւն տալիս է 2 պատուիրակ։ Այդպիսով՝ Թիֆլիս քաղաքի կողմից ընտրվում են 65 մարդ, մինչդեռ Թիֆլիսի ամբողջ թեմը ուղարկում է միայն 38 հոգի։ Բողոքողների կարծիքով ժամանակ է, որ վերջ լինի այդ անհաւասարութեան։

Այնուհետև սկսվում է քուէարկութիւնը գնդակներով։ Դրված են երդ.-հաւ. Յովհաննէս Սպենդիարեանի և բժիշկ Արտաշէս Շխեանի տուփերը։

Մէկ-մէկ ցուցակով տալիս են իրանց քուէները պատուիրակները։ Հետևանքը պարզվեց այսպէս. Սպենդիարեան ստացաւ 74 սպիտակ ու 21 սև, Շխեան՝ 60 սպիտակ ու 35 սև։

Նախագահը յայտարարում է, որ ուրեմն Թիֆլիսի թեմի կողմից կաթողիկոսական պատգամաւոր ընտրված է երդուեալ-հաւատարմատար Յովհաննէս Սպենդիարեան, իսկ նրա անձնափոխանորդ՝ բժ. Արտաշէս Շխեան։

Պէտք է ասել, որ քուէարկութիւնից ձեռնպահ մնացին 2 հոգի։

Վերջում Դուշէթի կողմից եկած պատուիրակները ժողովականների լուրջ ուշադրութիւնն են դարձնում այն ցաւալի երևոյթի վրա, որ նկատվում է Դուշէթի գաւառի հայ ազգաբնակութեան կեանքում։ Այնտեղ հայը կանգնած է այլասերման վտանգի առաջ, որովհետև կորցրել է լեզուն և առհասարակ այն ամենը, ինչ որ հայկական է։ Եւ միակ կապը, որ միացնում է հայ կոչվածներին, դա կրօնն է։ Պատուիրակները խնդրում են ի գահ Լուսաւորչի կոչել արժանաւոր անձի, որ չը մոռանայ նաև Դուշէթի գաւառի հայ ազգաբնակութեան անհրաժեշտ հերթական կարիքները, մանաւանդ դպրոցական խնդրում։ Այդ մասին հոգալու՝ պատուիրակները խնդրում են պատգամաւոր Յ. Սպենդիարեանին, որ խօսէ Էջմիածնի պատգամաւորական ժողովում։

Ապա նախագահը յայտնեց, որ պրեզիդիումն առաջարկում է ընտրել մի մասնաժողով, որ հոգ տանէ Թիւրքիայից, Պարսկաստանից, Ամերիկայից և Եւրոպայից եկող պատգամաւորներին արժանավայել կերպով ընդունելու և հիւրասիրելու համար։ Նա առաջարկեց իբրև անդամ այդ մասնաժողովի 17 անձանց, որոնց և ժողովը ընդունեց։ Մասնաժողովի անդամների անուններն են. 1) Արշ. Միլեան, 2) Խաչ. Աֆրիկեան, 3) Ս. Կաֆեան, 4) Մարկ. Դօլուխանեան, 5) Արշ. Բաբեան, 6) Ալ. Քալանթար, 7) Հ. Առաքելեան, 8) Գ. Նախշունեան, 9) բժշկ. Ս. Մայսուրեան, 10) բժ. Արտ. Շխեան, 11) Ալ. Բիշմիշեան, 12) Խաչ. Խաչատրեան, 13) Յար. Գասպարեան, 14) Սամ. Զէրքէզեան, 15) Ս. Երիցեան։ Ժողովն առաջարկեց այդ ընտրվածների վրա աւելացնել և երեք հոգևորականներ։

Նախագահը յայտարարեց ժողովը փակված ժամը $3^1/_2$-ին։ Ե.

II

Ատրպատականի պատգ. ընտրութիւնը

Թաւրիզ, 29 հոկտեմբերի

Կաթողիկոսական պատգամաւորի ընտրութեան հրահանգը Էջմիածնից ստացվելուց յետոյ Ատրպատականի պատգամաւորական ժողովը մինչև այսօր երեք նիստ է ունել կաթող. քառանուն թեկնածուներին որոշելու և պատգամաւորին ընտրելու համար. չորսի ընտրութիւնը գլուխ եկաւ, պատգամաւորինը մնաց նոյեմբերի 1-ի նիստին։

Հոկտեմբերի 1-ի առաջին նիստում նախագահում էր թեմակալ Կարապետ եպ. Տէր-Մկրտչեան. ներկայ էին 16 անձինք 20 ձայնով։ Նախագահ սրբազանը ժողովում կարդաց հանգուցեալ Իզմիրլեան կաթողիկոսի անակնկալ մահվան զեկուցագիրը. Ժողովը յոտնկայս լսեց տխրամած պաշտօնագիրը՝ յարգելու համար հանգուցեալ վեհի յիշատակը։

Սրբազանը արտասանեց հոգեհանգստեան աղօթք։ Դրանից յետոյ ժողովն անցաւ իր օրակարգին՝ քառանուն ցանկի կազմութեան գործին և խնդրեց թեմակալ սրբազանի բացակայութիւնը ժողովից։ Ժողովը՝ ընդ նախագահութեամբ նորընտիր նախագահ Ստ. Ստեփանեանցի, առանց երկար վիճաբանութիւնների, այլ կարճ, ազգու և յայտնի բովանդակութեամբ թշնամական մեղադրանքներից և արատաւոր ու ազգավնաս ճանաչելուց յետոյ, ընդդէմ մի ձեռնպահի, միաձայնութեամբ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանին դուրս հանեց քառանուն ցանկից. սրանով էլ վերջացաւ Ատրպատականի պատգ. ժողովի առաջին նիստը։

Կարծում ենք՝ աւելորդ է նոր բացատրականներ արձանագրել. ընթերցողն արդէն հասկացաւ, թէ ի՛նչ տարրերից է կազմված Ատրպատականի, մի քանի բացառութեամբ, ժողովրդական ներկայացուցչութիւնը։

Մենք բազմիցս առիթ ենք ունեցել «Մշակի» էջերում հանդէս բերել այն չարաբաստիկ հանգամանքը, որ մեր յայտնի ֆիրմայի թայֆայականները առ երես անմեղ, բեխաբար, սակայն ներքուստ խուրդային թափով ու տենդով, ոչ մի ներելի և աններելի միջոցների առաջ կանգ չառնելու պայմանով կատարում են իրանց պրօպագանդան՝ օգտվելով միամիտ և անգիտակից ժողովրդի տրամադրութիւնից և ընտրվում, որպէսզի ժողովի, խորհրդի և ընկերութիւնների մէջ հարցերն ու գործերը վճռեն ու տանեն այնպէս, ինչպէս ձեռնտու է իրանց։ Մեզ հետ շատերը Ատրպատականի պատգամ. ժողովի գոյութիւնը դաւանում են ժողովրդի անհարազատ ներկայացուցչութիւն և արդիւնք սոսկ պրօպագանդայի։ Օրմանեան արքեպիսկոպոսի քառանուն ցանկից միաձայնութեամբ դուրս հանվելը դրա փայլուն ապացոյցներից մէկն է. որովհետև կաթողիկոսների կեանքով, գործով և պաշտօնով հետաքրքրվող բոլոր հայերը Ատրպատականում և Թաւրիզում անհամբեր սպասում են Օրմանեանին տեսնել Մայր-Աթոռի գահակալ, ինչ որ տարաբաղդաբար հակառակը կատարվեց պատգամ. ժողովի վճռի մէջ, որ շատ ցաւ պատճառեց գիտակից հասարակութեան։

Հոկտեմբերի 18-ին տեղի ունեցաւ թեմական պատգամ. ժողովի երկրորդ նիստը՝ բացակայութեամբ թեմակալի, որին փոխարինում էր փոխանորդ Կարապետ քահանան, և նախագահութեամբ Ստ. Ստեփանեանցի։ Ներկայ էին 14 անձինք 19 ձայնով։ Օրակարգը քառանուն ցանկի ընտրութիւնն էր։ Նախընթաց ժողովում հարց էր բարձրացել, թէ արդեօք Ատրպատականից գնացող պատգամաւորը արտայայտվելու է Էջմիածնում թեմիս սրբազան առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի վերաբերութեամբ և այդ ինչպէս. թէր թէ դէմ։ Ժողովը խորապէս գնահատելով սրբազանի բարւոք գործունէութիւնն Ատրպատականում, և այն խիստ կրիտիկական բոպէներում, ընդդէմ 3-ի 11 ձայնով՝ որ նշանակում է մեծամասնութեամբ՝ մտցրեց թեմակալին ընտրելիների քառանուն ցանկի մէջ։ Դէպքը բաւականին ապշեցուցիչ էր, եթէ ի նկատի առնենք այն՝ որ Կարապետ եպիսկոպոսը և Օրմանեան արքեպիսկոպոսն ընդունված են միևնոյն գծի վրա և նոյն հոսանքի ընտրելիները, թեմակալը պէտք է դուրս անվէր ցանկից։ Սակայն գաղտնի քուէարկութիւնը և նաև Թեմակալի կատարած աշխատանքներն ու գործերը Ատրպատականում յաղթահարեցին անգամ իր հակառակորդներին։ Այսպիսի հանգամանքներում Կարապետ սրբազանի ընտրութիւնը մեծ պատիւ է իրան և բարձրագոյն ապացոյց նրա մաքուր և արդիւնաշատ գործունէութեան՝ հակառակ իրա դէմ յարուցված յանիրաւի թշնամանքների։ Կարապետ եպիսկոպոսի աջող ընտրութեամբ և վերջացաւ երկրորդ նիստը։

Թեմական ժողովի երրորդ նիստը կայացաւ հոկտ. 28-ին ժամանակաւոր նախագահութեամբ Թեմակալի, ուր ներկայ էին 14 անդամներ 20 ձայնով։ Սրբազանը իր անունը քառանուն ցանկի մէջ անցկացնել և առ ինքն ժողովի տուած վստահութեան մասին մի քանի խօսքով շնորհակալութիւն յայտնելուց յետոյ բացակայեց, իր տեղը տալով փոխանորդ Կարապետ քահանային։ Նախագահում էր ըստ առաջնոյն Ստեփան Ստեփանեանցը։ Քառանուն ընտրելիների մէջ ընտրված էր արդէն՝ Կարապետ եպ., հիմա հարկաւոր էր երեքին ևս ընտրել։ Տեղի ունեցան շատ թեր և դէմ և աղմկալից վիճաբանութիւններ այս ու այն ծանօթ հոգևորականի շուրջը։ Նախապէս առաջարկվեցին եպիսկոպոսների անունները՝ Սուքիաս Պարզեան, Դուրեան, տեղապահ Սուրէնեան, Մուրադբէգեան, Կիւլէսէրեան, Մեսրոպ և Մուշի առաջնորդ Խարախանեան սրբազաններ, որոնցից քուէների հաւասար և չափված մեծամասնութեամբ (իւրաքանչիւրը 11-ական քուէ ստացան ընդդէմ 3 ձեռնպահների) ընտրվեցին Սուրէնեան, Դուրեան և Մեսրոպ սրբազանները, որով Ատրպատականից քառանուն ցանկի մէջ մտաւ Կարապետ եպ. համեմատաբար բոլորից առաւել ձայնով, Սուրէնեան արքեպ., Դուրեան արքեպ. և Մեսրոպ եպ.։

Ապա ժողովը՝ նախքան պատգամաւորի ընտրութեան անցնելը՝ վիճաբանութեան ենթարկեց այն հարցը, թէ Էջմիածին գնացող պատգամաւորին ի՛նչ մանդատ կամ իրաւունքներ պէտք է տալ։ Երկար և աղմկայոյզ վիճաբանութիւններից յետոյ որոշվեց, որ պատգամաւորը լիազօրութիւն պէտք է չունենայ քառանուն ցանկի շրջանակից դուրս գալու, և շփվելով այլ և այլ հոսանքների և խմբակցութիւնների հետ պատգամաւորի հայեցողութեամբ անցկացվի 4 անուններից 2-ին կամ առնուազն մէկին։ Ժամանակը ուշ լինելով՝ պատգամաւորի ընտրութիւնը մնաց յաջորդ երեքշաբթի, նոյեմ. 1-ին։

Թաւրիզ, 2 նոյեմբերի

Համաձայն նախընթաց նիստի որոշման, Ատրպատականի թեմական պատգամաւորական ժողովը կայացաւ նոյեմբերի 1-ին, ուր ներկայ էին 14 անդամ 18 ձայնով։ Օրակարգի հարցը պատգամաւորի ընտրութիւնն էր։ Յետ երկար ու բաւական վիճաբանութիւնների և բացատրութիւնների, գաղտնի քուէարկութեամբ, երեքի վերապահութեամբ, միաձայն պատգամաւոր ընտրվեց ռուսահպատակների վաճառականապետ Զաքարիա Նազարբէկեան, իսկ կանդիդատ՝ Ջիբրայիլ Բուդաղեան։

Ընտրութիւնը միանգամայն պատուաբեր է. պատգամաւորին տրվեց լիազօրութիւն ժողովի կազմած քառանուն ցանկի շրջանակից ընտրելի ներկայացնել երկուսին կամ մէկին իր հայեցողութեամբ։

Հայկազուն

ԿԱԹ. ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Մոսկվայից հեռագրում են մեզ.

«Ամսիս 6-ին, կիրակի, ի տեղի բժիշկ Ս. Շահնազարեանի, որի ընտրութիւնը, իբրև պատուիրակի, բեկված էր Էջմիածնի սինօդի կողմից, կայացաւ նոր ընտրութեան համար ժողով տեղական ծխականների ահագին թւի մասնակցութեամբ։ Ճնշող մեծամասնութեամբ պատուիրակ ընտրվեց Ստեփան Մամիկոնեանը, իսկ անձնափոխանորդ՝ Կարապետ Կուսիկեանը։

«Արսէն Բուդաղեան, Ց. Խարմաճեան, Առաքել Միքայէլեան, Բարսեղ Գասպարեան»։

—

Մի այլ հեռագիր, ստորագրված բժիշկ Ս. Շահ-Նազարեանից, յայտնում է, թէ նորընտիր պատուիրակ Ստ. Մամիկոնեանը ընտրողների առաջ իրան յայտարարել է կողմնակից Օրմանեան արքեպիսկոպոսի ընտրելիութեան։ Կը սպասենք աւելի մանրամասն տեղեկութիւնների։

ԴՊՐՈՑԱԿԱՆ-ՈՒՍՄՈՒՑՉԱԿԱՆ ՖՈՆԴ

Կ. Հ. Բարեգ. Ընկ. խորհուրդը ստացել է Գրիգոր Մեսանիկեանից 100 ր.։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դրամա սիրային հողի վրա

Կրասնովօդսկ, 26 հոկտեմբերի

Վերջին երկու ամիսների ընթացքում միմեանց յաջորդող սպանութիւնները և անձնասպանութիւնները ինչպէս մեզ, նոյնպէս և բոլոր կրասնովօդսկեցիների համար միանգամայն զարմանալի էին իրանց անհիմն առանձնայատկութիւններով։

Դեռ Ա. Կ. Դանիլովի ինքնասպանութիւնը, ինչպէս և Շնէյդէրի ու իր կնոջ սպանութիւնը չը մոռացած՝ երէկ երեկոյեան կրկին ականատես եղանք պոստ-հեռագրատան մէջ երկու երիտասարդ դեռ չը ծաղկած, բայց թառամած, միմեանց մօտ անշունչ պառկած դիակների՝ երիտասարդ Եարավօյին և 18 տարեկան օրիորդ Կարալկովային (երկուսն էլ պոստ-հեռագրատան բաժանմունքում ծառայող)։ Ականատեսների պատմելով, դէպքը տեղի է ունեցել սիրահարական հողի վրա և այն էլ այս ձևով։ Ամսիս 25-ին, երեկոյեան ժամը մօտ 9-ին, երբ երիտասարդ Եարավօյը մտնում է օրապահութեան պաշտօնի մէջ, մօտենում է օրիորդին և սկսում է խօսեցնել նրան, բայց օրիորդը, ինչպէս սկզբից չէ սիրել և չէ խօսել, այս անգամ էլ չէ խօսում, այլ շարունակում է իր աշխատանքը. այդ ժամանակ կրքերից կուրացած երիտասարդը հանում է «Նագան» ատրճանակը և առաջին հարուածը հասցնում օրիորդի մէջքից, իսկ երկրորդը իր ճակատի աջ կողմից. երկուսն էլ իսկոյն և եթ անշնչանում են և արեան մէջ շաղախված փռվում են գետին։ Հեռագրատան մէջ պարապողները լսելով ատրճանակի ձայնը՝ սարսափահար եղած ծածկվում են սեղանների տակ։ Դէպքի վայրն էին եկել գաւառապետը, ոստիկանական պաշտօնեաները, 30 զինված զինւորներ և ուրիշ շատ անձնաւորութիւններ։ Տխուր դէպքին ականատես լինելու համար մեծ բազմութիւն էր հաւաքվել։ Այստեղ արդէն անզօր եմ գտնվում նկարագրել գիշերվայ պահին օրիորդի ծնողների ճիչն ու աղաղակը, լացն ու կոծը և ներկայ եղողների ախն ու վախը։ Եարավօյը իր ընկերներին դէպքից 2 օր առաջ ասել էր, որ ինքը միայն 2 օր պէտք է ապրէ։

Զ.-էն

—

Յորդ անձրև

Ղալաչա, 29 հոկտեմբերի

Երկարատև երաշտից յետոյ սարերը ձիւնով պատվեցին, սարսափելի ցրտեր եղան և բաւականին զգալի վնասներ պատճառեցին գիւղացիներին, մանաւանդ խոզապաններին. խոզապահութիւնը մեր գիւղացիների ապրուստի գլխաւոր աղբիւրներից մէկն է, մեծ ակնկալութիւն ունէին խոզապահութիւնից այս տարի. խոզերը պահվում և կերակրվում էին անտառներում կաղնով և աճարով. աճար չը կար, կաղինն էլ մասնաւոր էր. այդ մասնաւորին էլ փչացրեց վաղահաս ցուրտը, և այսպիսով գիւղացին այդ կողմից էլ զրկվեց։ Ծանր բօպէներ գիւղացիները շատ են անցրել, բայց բոլորին էլ մոռացրեց այս տարին. մի կողմից չէ հարուածվում սա. դառնութեան մի բաժակը չը դատարկված՝ միւսն է լցվում. օգոստոսին կարկուտը ոչնչացրեց, հիմա ցուրտը. կամաց-կամաց տաւարի ժանտախտը շրջակայ գիւղերից իր քիթն է ցոյց տալիս. հարկերը, անտառի տուգանքները, ձմերանոցների այրելը, անտանելի է մանաւանդ անտառապահների կազմած տուգանքները. երեք սայլ չոր վառելափայտի համար տուգանքի արձանագրութիւն են կազմել երեք հոգու վրա, ինչպէս Յարութիւն Քարիմեանցը պատմեց, 135 ր. 35 կ., և այդ եղել է դարձեալ վրէժխնդրութիւնից. ինչպէս և առաջ էի գրել, մեր և շնողեցիների միջև հողային վէճ կար. բանի կերպով շնողեցիք կամենում էին տիրանալ մեր հողերին, որը քարտէզով օգտվելով մերն էր և որն ապացուցվեց վերջը, և վէճը մէջտեղից վերացաւ. սահմանն անցել և մեր մասում խոտհարք է բացել անտառապահ Վասիլը. Քարիմեաններն, որոնց պատկանում էր հողի այդ կտորը, հնձում են խոտը, որն և տեղիք է տալիս այդպիսի մեծ գումարի—135 ր. 35 կոպ.—կազմելուն. տուգանքի արձանագրութիւնը ես անձամբ չեմ տեսել. գիւղացին լալով այս բանն պատմեց, որին յայտնել է հասարակական գրագիրը պաշտօնական ձևով. այրելու փայտ կրելու համար ամբողջ հասարակութիւնը տոմսակ ունի վերցրած։ Բայց ո՞վ է հետևողը, թէ ո՛վ ինչպէս է վարվում. գիւղացին տգէտ է, օրէնքին անտեղեակ, լեզու չունի, գրպանը դատարկվել է, հիւծվում է ֆիզիկապէս։ Միակ ուրախալի երևոյթ գիւղացիների համար այն է, որ երեք օր շարունակաբար յորդ անձրև եկաւ. լճացրեց ամեն բան. գեղեցիկ արտեր կան կանաչին տուող։

Փորտսէր

—

Գաւառական մի նոր թերթ

Շուշի, 26 հոկտեմբերի

Ինչպէս յայտարարված էր, բժ. Եարամիշեանի խմբագրութեամբ շուտով այստեղ լոյս կը տեսնի «Ղարաբաղ» թերթը։ Շուշին իր բազմամարդ գաւառով, ազգաբնակութեան զանազան կարիքներով և երկրի այլևայլ արդիւնաբերութեամբ միշտ կարիք է ունեցել մի տեղական գաւառական թերթի։ Լիայոյս ենք, որ, մեր հասարակութեան համակրութիւնը գրաւելու համար, «Ղարաբաղը» նուիրված կը լինի հասարակութեան և գաւառի շահերին, հեռու եսական և անձնական կրքերից, անաչառ և բարձր պահելով այն ազնիւ դրօշակը, որի վրա դրոշմված է մամուլ անունը։

Պող. Զաքարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Այսօր՝ Լոմոնոսովի ծննդեան երկհարիւրամեակի առիթով ամբողջ Ռուսաստանում, ինչպէս նաև Թիֆլիսում տեղի կունենան դասախօսութիւններ և ընթերցանութիւններ կրթական հաստատութիւններում։ Ռեֆերատ կը լինի Ժողովրդական Տան մէջ։

◆ Կիրակի, նոյեմբ. 6-ին, նախ քան կաթողիկոսական պատգամաւորի ընտրութիւնը առաջնորդարանում, Վանքի եկեղեցու բակում հանգուցեալ առաջնորդ Գաբրիէլ արքեպիսկոպոս Սաթունեանի գերեզմանի վրա կատարվեց հոգեհանգիստ՝ մահվան տարելիցի առիթով։ Բացի խուռն բազմութիւնից, հոգեհանգստին ներկայ եղան նաև կաթողիկոսական պատուիրակները։

◆ Նոյեմբերի 4-ին Պետերբուրգ մեկնեց Կովկասի Փոխարքայի դիւանապետ հոֆմէյստէր Պետերսօնը, որ մասնակցելու է այն խորհրդակցութեան, որը քննելու է Կովկասի գիւղացիների և կալուածատէրերի յարաբերութիւնները կանոնաւորելու խնդիրը։

◆ Կովկասը ևս մասնակցելու է այն համագումարին, որ կայանալու է Պետերբուրգում 1912 թ. յունվարին՝ մանր վարկի հարցի քննութեան համար։

◆ Կովկասի Փոխարքայի կարգադրութեամբ, Հակկէլի նախագահութեամբ առանձին մասնաժողով կազմվեց, որ պաշտօն ունի մի ընդհանուր ծրագիր մշակելու նրանց համար, որոնք զօրաժողովի ժամանակ ձիեր են հաւաքելու ազգաբնակութիւնից։

◆ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ զէնքի վերաբերեալ պարտադիր որոշումները խախտելու համար Գ. Մալիշկօն ենթարկվեց 300 րուբլի տուգանքի։

◆ Թիֆլիսի նահանգապետը հաստատեց հետևեալ սակագինը հացի համար. փռան հացի 1-ին տեսակի ֆունտը $4^1/_2$ կոպէկ, 2-րդ տեսակինը՝ 4 կոպէկ, 3-րդ տեսակինը՝ $3^1/_2$ կոպ., հաճարի հացի ֆունտը $2^1/_2$ կոպէկ։ Թոնիրներում թխված հացի ֆունտը 1-ին տեսակինը 5 կ., 2-րդ տեսակը՝ $4^1/_2$ կոպ., 3-րդ տեսակը՝ $3^1/_2$ կ.։ Լաւաշը առաջին տեսակի ֆունտը 5 կ., 2-րդ տեսակինը $4^1/_2$ կ.։

◆ Թիֆլիսի քաղաքային դումայի ընտրութիւնների առիթով քաղաքային վարչութեան մէջ արդէն տրվում են մուտքի տոմսակներ ընտրելու իրաւունք ունեցողներին, որոնց թիւը հասնում է մօտ 4000-ի։ Իրաւատէրերի անձնափոխանորդներ ընտրվելու են 17 հոգի։

◆ Առևտրական գիտելիքներ տարածող Թիֆլիսի ընկերութիւնը վճռել է շուտով Թիֆլիսում բանալ առևտրական բարձր ուսումնարան։

◆ Պլեվիցկայայի համերգի տոմսակները համարեա բոլորը վաճառվել են, մնում են առաջին կարգերի թանգ տոմսակները։ Համերգը, ինչպէս յայտնի էր, նշանակված է նոյեմբ. 12-ին։

◆ Երէկ, Արտիստական Ընկերութեան հիմնադրութեան տարեդարձին, կայացաւ ընդհանուր ճաշ մեծ դահլիճում։ Եղան ճառախօսութիւններ։

◆ Նոյեմբ. 14-ին տեղի կունենայ յայտնի դաշնակահար Ռախմանինօվի համերգը Արքունական թատրոնում։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. Խորհրդի փոխ-նախագահ իշխանուհի Մ. Թումանեանի նախաձեռնութեամբ և մասնակցութեամբ հոկտեմբերի 21-ին կայացել է Աբասթումանում ժողով տեղական հայերից և միաձայն որոշվել է բանալ Աբասթումանում Կ. Հ. Բ. Ընկ. ճիւղ, որը կազմակերպելուց յետոյ բանալու է հայոց դպրոց։ Ընկերութեան խորհուրդը, ստանալով ժողովի խնդիրը և արձանագրութիւնը, նոյեմբերի 5-ին կայացած նիստում որոշեց թոյլ տալ խնդրատուներին բանալ Աբասթումանում Ընկ. ճիւղ։

◆ Սև-ծովի հիւսիս-արևմտեան մասի ձկնորսութեան համար մշակված առանձին պարտադիր կանոնները տարածվելու են նաև Կովկասի վրա։

◆ Ինչպէս յայտնի է, կովկասեան երկաթուղիների կառավարչի պաշտօնում հաստատվեց գեներալ Ռօզէ։ Այդ առիթով «Зак. Рѣчь»-ը նկատում է. «Յիշեալ Ռօզէն բնաւ ծանօթ չէ տեղական պայմաններին։ Միթէ Կովկասը այնքան աղքատ է մարդկանցով, որ անկարելի եղաւ տեղում արժանաւոր թեկնածու գտնել»։

◆ Քութայիսից Գուրիա է մեկնել երկրաբան Ցուբէրը մասնագէտ ինժեներների ուղեկցութեամբ՝ Գուրիայում երևացած նաւթի հետազօտութեան համար։

◆ Գորու այգետէրերը միութիւն են կազմում միացեալ ույժերով թարմ և կոնսերվի ձևով մրգերը պետութեան ներքին շուկան արտահանելու համար։

◆ Սաջէվախօ և Զօխատաուրի կայարանների միջև, Բաթումի գծի վրա, նոյեմբերի 2-ին, անյայտ անձեր յարձակվել են պոստի վրա, սպանել են մի ձի, վիրաւորել են պահակին և, յափշտակելով 8,000 ր., անյայտացել են։ Կօբուլէտում աւազակները ներս են խուժել 80 տարեկան պառաւ Գրինի տունը, կտրել են նրա գլուխը և, հաւաքելով փողերն ու իրերը, փախել են։

ՏԵՂԵԿ. ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Գրիգոլ Դիասամիձէի խմբագրութեամբ լոյս տեսնող «Թէմի» լրագրի № 44-ը համարեա ամբողջապէս նուիրված է հանգուցեալ Ն. Ցխվէդաձէի յիշատակին։ Այս համարի մէջ մտնում են մի շարք յօդուածներ, մի բանաստեղծութիւն և հանգուցեալի թաղման օրը արտասանված դամբանականները։

◆ Այս օրերս կառավարութեան կարգադրութեամբ ձերբակալվեցին երկաթուղային արհեստանոցի ծառայող Կալիստրատէ Գօգուա և յայտնի բանասէր Ակակի Չխենկէլին։

◆ Կիրակի, նոյեմբերի 6-ին Թիֆլիսում լոյս տեսաւ «Դիլա» (Առաւօտ) անունով 2 կոպէկանոց օրաթերթ, Անդրէյ Ղուլաձէի խմբագրութեամբ։ Թերթի մէջ տեղ են գտել մի շարք յօդուածներ քաղաքային առաջիկայ ընտրութիւնների առիթով։

◆ Թիֆլիսի նահանգի ազնուականութեան պարագլխի պաշտօնում կառավարութեան կողմից հաստատվել է իշխան Փարսադան Միքելաձէ։

◆ «Նոր-Ակումբի» աւագների խորհուրդը այս օրերս կազմակերպելու է գրական-երաժշտական երեկոյթ, Լեվ Տոլստոյի յիշատակին նուիրված։

◆ «Նոր-Ակումբի» աւագների խորհուրդը որոշեց հրատարակել մի ամսագիր։

◆ Մօտ ժամանակներս վրաց թատրոնում կը տրվեն երկու օպերա վրաց լեզուով։ Նախ կը խաղացվի «Սեվիլեան սափրիչ», իսկ ապա «Րիգօլէտտօ»։

◆ Հոկտեմբերի 6-ին վրաց թատրոնում խաղացվեց Վ. Փափազեանի «Ժայռ» պիէսը, որը Ն. Ցխվէդաձէի մահվան առիթով հոկտեմբերի 3-ին չը խաղացվեց։

◆ Քութայիսում, ամսիս 3-ին, կատարվել են մի շարք խուզարկութիւններ վրացի հասարակական գործիչների շրջաններում։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

I

Հին-Նախիջևան, 27 հոկտ.

Վերջապէս մեր քաղաքի թատրոնական բեմն ևս, շնորհիւ հայկական ընտանիքում մեծացած գերմանուհի՝ տիկին Գինէրի (հայազգի բժշկի ամուսին), կարգի ընկաւ։ Այդ շնորհալի տիկնոջ ղեկավարութեան տակ, առանց ազգային խտրութեան, սիրողների մի տաղանդաւոր խումբ կազմվելով, մի շարք գրաւիչ ներկայացումներ են տեղի ունենում։

Այս օրերս խաղացված՝ «Ճակատագրական քայլ» դրաման և «Յօրիկեան» վօդևիլը, բազմաթիւ հանդիսականների ներկայութեամբ, այնքան աջող անցան, որ այլևս ապահոված պէտք է համարել այդ խմբի ապագայ գործունէութիւնը։

Ամենից աւելի աչքի էին ընկնում տիկիններ՝ Գիլնէր, Կավրիևա, Տրժէտրժէվինսկայա, պ. պ. Բէնդուկիձէ, Բէուգ-խան Նախիջևանսկիյ և Դունեայեան, որոնք խոստացել են մի ներկայացում յատկացնել հայոց դպրոցի օգտին։

Մեզ մնում է շնորհաւորել տիկին Գիլնէրին այդ բարի գործի մէջ և աջողութիւն ցանկալ։

Ա. Պարզեան

ՄԱՄՈՒԼ

Իր գոյութեան կարճ ընթացքում, Թիֆլիսի «Հորիզոն» թերթը մի քանի անգամ կերպարանափոխութիւններ կրելուց յետոյ կամ, ճիշդն ասած, մի քանի դիմակներ փոխելուց յետոյ, այս ամսիս 6-ից դարձեալ ենթարկել է իրան մետամորֆոզայի, այս անգամ արտաքինի կողմից։

Սակայն նոր արևը իր նոր գոյութիւնը շատ անմաքուր հորիզոնով է սկսում։ Նա, չը քաշվելով այն բանից, որ լոյսը, արևը ամենից առաջ ճշմարտութիւն են սիրում, հնարում է մի ստութիւն և ապա այդ ստութեան վրա հիմնում մի ամբողջ շէնք և մի կեղտոտ պրովօկացիա։ Եթէ հաւատանք խաւարաճաճանչ «Հորիզոնին», Թիֆլիսի թեմի կաթող. պատուիրակները որոշել են կաթողիկոսական պատգամաւոր ընտրել հայ կապիտալիստներից մէկին, և գիտէք ինչի՛ համար, որպէսզի այդ կապիտալիստ-պատգամաւորի ձեռքով—ոչ աւելի, ոչ պակաս—կաշառեն Թիւրքահայ պատգամաւորներին յօգուտ Օրմանեանի, որովհետև Թիֆլիսի վաճառականները որպէս թէ այն կարծիքն ունեն, թէ Թիւրքահայ պատգամաւորները իրանց համոզմունքը ծախելու ընդունակ մարդիկ են։

Հարկ կա՞յ կրկնելու, որ Թիֆլիսի պատուիրակները, ոչ ևս վաճառականները ոչ երբէք մտադիր են եղել կապիտալիստ ընտրելու, ոչ էլ այդպիսի մտածմունք են ունեցել Թիւրքահայ պատգամաւորների մասին, թէ նրանք կաշառվող հոգիներ են, և ոչ ևս ումիցէ կաշառելու միտք են յղացել։ Ճիշդ որ, ըստ ռուսական առածի, съ больной головы на здоровую. «Հորիզոնը» մոռանում է, որ կաշառվելու ընդունակութեան մէջ ինքը ամբաստանվեց Գ. Ենգիբարեանի բերանով։

Վերագրելով Թիֆլիսի վաճառականներին և պատուիրակներին այդպիսի կեղտոտ մտածմունք, «Հորիզոնը» ուղղակի պրովօկացիայի է դիմում, կամենալով գրգռել Թիւրքահայ եկող պատգամաւորներին. «տեսէք, Թիֆլիսի վաճառականները ի՛նչ կարծիք ունեն ձեր մասին»։

Եւ այդպիսի անարժան, միտումաւոր ինսինուացիայի պատասխանը նոյեմբերի 6-ին կայացած պատգամաւորի ընտրութիւնն էր յանձին հայ ինտելիգենտ փաստաբան Յ. Սպենդիարեանի։

«Հորիզոնը» հայ վաճառականների հասցէին ուղղած այդ վիրաւորական խօսքերը չը պէտք է ասէր, քանի որ այսօր իր ողորմելի գոյութիւնը ապահովելու համար կազմված «Լոյս» ընկերութեան գլխաւորը մի հայ վաճառական է։

*

Մենք ստացանք Բագու քաղաքում հրատարակվող մի նոր երկշաբաթաթերթ «Նոր Խօսք» անունով, որ լոյս է տեսնում այս նոյեմբեր ամսից։ Նոր հանդէսը բովանդակութեամբ առայժմ թողնում է լուրջ գրական օրգանի տպաւորութիւն։ Ցանկանում ենք աջողութիւն։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 27 հոկտեմբերի

«Մշակի» 232-դ համարում տպված էր Ալ. Ստեփանեանի նամակը կաթողիկոսական պատուիրակների ընտրութիւնների վերաբերմամբ։ Այդ նամակում յիշվում են անունները մի քանի մարդկանց, որոնք իբր թէ «Հորիզոնի» կողմից նախապատրաստված են եղել պայքարելու օրմանեանականների դէմ։

Ի միջի այլոց այնտեղ յիշված է և իմ անունը։

Այդ առիթով յայտնում եմ, որ ես ոչ մի կապ չունեմ «Հորիզոնի» և նրա վարիչների հետ։ Ես եկեղեցի եմ գնացել միայն իբրև ծխական, իսկ եթէ իմ գնալը Շամքորեցոց եկեղեցում սառը ջուր է մաղում օրմանեանական Հ. Տէր-Աստուածատրեանի և Համազասպ քահանայի վրա և նրանք չեն կարողանում անցկացնել իրանց թեկնածուներին, դրանում ոչ թէ «Հորիզոնն» է մեղաւոր, այլ այն գիտակից ծխականները, որոնք իրանց մեծամասնութեամբ ներկայանում են Կարմիր Աւետարանի ժողովում, իսկ մի օրմանեանական կրկնաքուէարկութիւն կատարելով անցնում է շնորհիւ Հ. Տէր-Աստուածատրեանի կեղծիքի, որի մասին իսկոյն և եթ բողոքվում է, բայց հայր նախագահը անուշադիր է թողնում, որովհետև ընտրվողը իր որդին է և օրմանեանական։ 36 ձայնի տեղ թերթիկները լինում են 38 և այն էլ ոչ պաշտօնական կնիքով կնքված թերթիկներ, որի մասին արձանագրութիւնը ստորագրելիս մի քանի ծխականների կողմից բողոքվում է։

Մ. Ղուշչեան

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԿԱՐ-ՄԻՐԻՆ

(«Մշակ» № 219)

—

Գաղափարների շփոթութեան և մտքերի խառնակութեան մի սոսկալի շրջանում ենք ապրում մենք այսօր։ Վերջին 10-ամեակում կոյր կուսակցական տեսակէտներով շփոթել ենք իրար հետ մարդկանց, դէպքեր և երևոյթներ այն աստիճան, որ այսօր առաջադէմը պահպանողական է երևում, ժողովրդականը՝ կղերական, օտարի ստրուկը՝ ազգասէր և այլն։ Այնքան փակվել են մեր աչքերը և պղտորվել յստակ գիտակցութիւնը, որ այլևս չենք կարողանում տեսնել, թէ ինչպիսի տգեղ խմբակցութիւններ են կազմվել մեզանում վերջին ժամանակներս՝ կաթողիկոսական ընտրութիւնների առիթով։ Մտածել պէտք է մի բոպէ, թէ ինչ է նշանակում օրինակն այսպիսի մի խմբակցութիւն. «Ժամանակ», «Ազատամարտ», Մանկունի, «Հորիզոն», Սուրէնեան, Լէօ, Թումանեան Յովհաննէս, Պապունի և Թոդիկ և այլն, որպէսզի պարզ լինի ամենիս համար, թէ ինչպիսի տգեղ և անհասկանալի խմբակցութիւն է այդ։ Դրանց մէջ ո՛չ մի սրտակցութիւն և գաղափարակցութիւն որոնել չէ կարելի. ո՞ր գաղափարն է օրինակ, որ կապում է Մանկունուն ու Սուրէնեանին «Հորիզոնի», Լէօի և Յովհ. Թումանեանի հետ. ինչ հաղորդակցութիւն կարող է լինել ռետրոգրադի և իրանց ձախակողմեան հռչակող, առաջադիմութեան կողմնակից հորիզոնականների միջև։ Անշուշտ ո՛չ մի,—կը պատասխանեն բոլորը։ Բայց անկասկած է և արևի նման պարզ, որ այդ տգեղ խմբակցութիւնը գոյութիւն ունի և մեծ եռանդով աշխատում է գործ տեսնել։ Ի՞նչ գործ է այդ, որ այդպէս սերտ կապելով միացրել է այնքան այլազան և անհաման տարրերին։ Հին-հին դարերից յայտնի գործն է այդ. մարդիկ միանում են և դաշն են կապում միմեանց հետ՝ արդարներին կործանելու համար. «Եկէք սպանենք, մէջտեղից վերցնենք արդարին, որովհետև նա մեզ հաճելի չէ»։ Ահա բոլորը, և ես խնդրում եմ՝ հայ ընթերցող հասարակութիւնը թող լուրջ կերպով մտածէ այդպիսի արտասովոր խմբակցութեան մասին, որպէսզի ինքն անձամբ համոզվի, որ ես սխալ բան չեմ ասում։

Մի այլ խումբ վեր է կացել ահա և մեր լրագրութեան մէջ ջանք է գործ դնում դարձեալ մոլորեցնելու հայ հասարակութեանը՝ գոյութիւն չունեցող կուսակցութիւններ և ուղղութիւններ հնարելով մեր եկեղեցու մէջ։ Հայ հոգևորականներին բաժանել են նրանք իրանց գլխում—բոլորովին հակառակ իրականութեան—երկու բանակի՝ ժողովրդական և կղերական բանակներ, որոնք ուրիշ անունով ազատամիտ և պահպանողական էլ են կոչվում։ Բայց ողջ տրագիքոմը այս շինծու փաստաբանութեան մէջ այն է, որ ժողովրդական և ազատամիտ բանակի մէջ մտցրել են ի միջի այլոց նաև Սուրէնեան սրբազանին, որ երբեմն թունդ Նոր-դարական էր և

3 տարի առաջ դանակով ու կրակով մօտեցաւ ազատ մաքի արտայայտութեանը «Արարատի» մէջ, ի հարկէ իր «անխորհուրդ խորհրդականների» դրդմամբ. իսկ կղերական և պահպանողական բանակի մէջ մտցրել են Օրմանեան և Կարապետ սրբազաններին, որոնցից առաջինի լայնախոհ ազատամտութեան ապացոյցները գրեցի ես, իր իսկ գրքերից արտագրելով, ներկայ տարւայ «Մշակի» մի քանի համարներում՝ նրա նորագոյն գրքի գրախօսութեան առիթով, իսկ վերջինն այնքան ազատամիտ է եղել, որ կասկածելի է թւացել երբեմն ազատամիտ համբաւ վայելող Յուսիկ արքեպիսկոպոս Մովսիսեանին, որն և Կարապետ եպիսկոպոսի այդ «չափազանց ազատամտութեան» մասին կարևոր է համարել նոյնիսկ հայոց կաթողիկոսին զեկուցանելու (տես «Լումայ», 1903, Յուսիկ եպիսկոպոսի սեփական խօսքերը)։

Եթէ ես գրել եմ, թէ սրբազան Օրմանեանը քարացած պահպանողական չէ կամ լայնախոհ ազատամիտ է, իսկ Կարապետ եպիսկոպոսը նոյնպէս և դեռ էլ աւելի, միշտ էլ աշխատել եմ ասածս ապացուցանել՝ նրանց գրուածքներից կտորներ մէջ բերելով և փաստերը բոլորի աչքի առաջ դնելով։ Ի՞նչ արժէք կարող են ունենալ այդպիսի փաստացի հաւաստիացման հանդէպ Կար-Միրի երկար ու բարակ բացագանչութիւնները։ Ճշմարիտ է, այդ բացագանչութիւնների նպատակն է ազդել «Մշակի» հետևողների զգացմունքի վրա, մթագնելով նրանց գիտակցութիւնն ու առողջ դատողութիւնը. բայց մի՞թէ Կար-Միրները կարծում են, թէ այդպիսի ակնյայտնի կեղծիքն ու ֆալսիֆիկացիան հնարաւոր է այժմ, երբ մանաւանդ նրանք՝ կղերական-պահպանողական բանակի մէջ են դնում նոյնիսկ ինձ, որի գրածները իսկական կղերականները հերետիկոսութիւն համարեցին և այս օրերս էլ Կ. Պոլսի խառն ժողովի կրօնական անդամները նոյն հիմունքներով իրանց իրաւունքն համարեցին մերժել նրա (այսինքն իմ) ընտրութիւնը կաթողիկոսական ընտրութեան պատգամաւորութեան համար։ Մի՞թէ այնքան միամիտ են Կար-Միրները, որ կարծում են, թէ «Մշակի» հետևողներն այդպիսի անհեթեթութիւն կարող են առանց ըմբռնելու կուլ տալ և չեն յիշի գոնէ, որ դեռ հազիւ 2 տարի առաջ «Մշակը» յայտարարեց, որ Երուանդ վարդապետի քարոզածը նոյնն է, ինչ որ Արծրունու քարոզածը։ Թէ Կար-Միրը Արծրունուն էլ է կղերական և պահպանողական համարում։

Երուանդ Տէր-Մինասեան

(Վերջը միւս անգամ)

ՕՐՒԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ամբողջ Ռուսաստանը տօնեց Լ. Տօլստոյի մահվան տխուր տարեդարձը նոյեմբերի 7-ին։

◆ «Рѣчь»-ը հաղորդում է, որ «Եասնայա Պօլեանան» պետական գանձատան հաշւով գնելուն հակառակ է սինոդի օբէր-պրօկուրօր Սաբլէրը։ Մինիստրների խորհրդի նիստում Սաբլէրը յայտնել է, որ Եասնայա Պօլեանայի գնելը, որ ցոյց կը տայ Տօլստօյի մեծութեան պաշտօնական հաւանութիւնը, սպառնում է տիրող եկեղեցու պրէստիժին։

◆ Պարզվեց, որ Օդեսսայում կալանաւորված յայտնի աֆէրիստ Մինչը ծագումով բուլգար է, աւարտել է Մոսկվայի համալսարանը, եղել է ժանդարմների շէֆ Թիւրքիայում, տիրապետում է շատ եւրոպական ու ասիական լեզուների։

◆ Օրէնբուրգում ինքնասպան եղաւ ոստիկանապետ Բիբինը դրամական զեղծումներ կատարելուց յետոյ։

◆ Մոսկվայում մեռաւ ոմն Զերկօվ, որի ցնցոտիների մէջ գտնվեցին 100 հազարից աւելի գումարի բանկային թղթեր։

◆ Որոշված է ռուսական տօների թւից կրճատել 22 տօն։

◆ Հէնրիխ Սէնկէվիչը ենթարկվեց անդամահատութեան։ Դրութիւնը վտանգաւոր չէ։

◆ Մոսկվայում ինքնասպանութեան նպատակով ատրճանակից վիրաւորեց իրան հոգեկան հիւանդ միլիօնատէր Ն. Ստախէևը։

◆ Բերլինում ինքնասպանութիւն գործեց սեղանաւոր Օտտօ Րիխտէրը, որ տառապում էր անբուժելի հիւանդութեամբ։

◆ Բերլինում կայացաւ հսկայական միտինգ ընդդէմ պատերազմի։ Մասնակցում էին 40,000 մարդ։ Խօսեցին անգլիացի, ֆրանսիացի, բելգիացի և աւստրիացի աչքի ընկնող գործիչներ և պատգամաւորներ։ Ժողովը ցրվեց առանց միջադէպի։

◆ Պապը սպառնում է բանադրել բոլորին, ով կը համարձակվէ դատի կանչել հոգևոր անձանց առանց հոգևոր իշխանութիւնների թոյլտուութեան։

◆ Անգլիական դիպլօմատիական շրջանները դժգոհ են Ռուսաստանի՝ Պարսկաստանի նկատմամբ արած վերջին քայլերից։

◆ Ռուսաստանը այժմ՝ բացի ներողութիւն խնդրելուց՝ Պարսկաստանից պահանջում է նոր խոշոր գոհացումներ։

◆ Անգլիական դրամատէրերի ներկայացուցիչները մեկնեցին Պետերբուրգից, չը կարողանալով ստանալ Ռուսաստանի համաձայնութիւնը պարսից կառավարութեանը 40 միլիօն ռուբլի փող տալու համար։

◆ Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ Մահմէդ-Ալին ներկայումս թաքնված է կասպիական ծովափին։

◆ Տեղեկութիւններ կան, թէ իբր իտալական նաւատորմը ոչ մի պատերազմական ձեռնարկութեան այլ ևս չէ դիմելու Եգէյեան ծովում, որովհետև Ռուսաստանը և Անգլիան ուլտիմատում են ուղարկել Իտալիային։

◆ Լուրերի համաձայն, պատերազմի դաշտում իտալական զօրքերի մէջ մեծ դժգոհութիւն է տիրում։

◆ Թիւրքաց իշխանութիւնները շարունակում են գաւառներում զինել մահմեդական ազգաբնակութիւնը։

◆ Եգիպտոսում մեծ գրգռում է տիրում եւրոպացիների դէմ։ Յայտնի շէյխերը մեծ թւով զօրքեր և դրամ են ուղարկում Տրիպօլիս։

◆ Այժմ պապը թշնամաբար է վերաբերւում դէպի պատերազմը։ Նա թոյլ չը տուեց հոգեհանգիստ կատարել Տրիպօլիսում ընկած զոհերի յիշատակին։

◆ Կ. Պօլսի մզկիթներում մօլլաները շարունակում են սրբազան պատերազմ քարոզել։

◆ Իտալիան երաշխաւորել է Գերմանիային, որ ձեռք չի տայ Դարդանէլին և Թիւրքիայի եւրոպական նահանգներին։

◆ Աւստրիան շարունակ զօրք է ուղարկում Նօվօ-Բազարի սանջակը։

◆ Ներկայումս Պէկինի բաղդը յանձնված է ամբողջովին Իւանշիկային, որին յեղափոխականները խոստացել են ճանաչել միապետութիւնը, եթէ նա կը լինի պետական խնամակալ։

◆ Տեղեկանալով, որ Իւանշիկայը դարձել է պրէմիեր, շատ գեներալներ արդէն հրաժարվում են յեղափոխականներից։

◆ Խունխուզները խոշոր վարձատրութեամբ պատրաստակամութիւն են յայտնել պաշտպանել Պէկինը։

◆ Իր զինւորներին «ոգևորելու» նպատակով, չինական կառավարութիւնը իւրաքանչիւրին ընծայ է տուել 1 ր. 47 կ.։

◆ Պէկինում տեղեկութիւններ են ստացվել, որ իբր թէ Շանխայի, Կանտօնի և Խանկօույի յեղափոխականների շրջանում խոշոր տարաձայնութիւններ են ծագել։

◆ Կառավարական զօրքերը սկսել են նահանջել դէպի Պէկին, նեղվելով յեղափոխականներից։

◆ Չինական յեղափոխական կառավարութիւնը դրամական տագնապի մէջ է։ Նա որոշել է փոխառութիւն կնքել։

◆ Իւանշիկայը խոստանում է եւրոպական պետութիւններին մեծամեծ զիջումներ, եթէ նրանք վերջ կը դնեն չինական արիւնհեղութեան։

◆ Կայսերական հրովարտակով Իւանշիկայը նշանակվեց Պէկինի շուրջ գտնվող բոլոր կառավարական զօրքերի ընդհանուր հրամանատար։

◆ Մուկդէնի փողոցներում ամեն օր ցոյցեր են։ Զօրքերը եղբայրացել են ազգաբնակութեան հետ։

◆ Հնդկաչինում ազգաբնակութիւնը խանդավառ ցոյցեր է կազմակերպում չին յեղափոխականների յաղթութիւնների առիթով։ Տեղացիների բոլոր տները զարդարված են յեղափոխական նշաններով։

◆ Չինական նահանգներում յեղափոխականների յաղթութիւնը աներկբայ է։ Մնում է մայրաքաղաքը, որ և շուտով կը լուծվի ներկայ դինաստիայի լինել կամ չը լինելու հարցը։ Պետական խնամակալի և այրի թագուհու ամբողջ յոյսը Իւանշիկայն է։

◆ Չինաստան մեկնեցին շատ յայտնի եապօն սօցիալիստներ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

5 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Պանտելէյմօն» և «Եւստաֆիյ» ռազմանաւերի խորտակման գործի առիթով պատասխանատուութեան են ենթարկվում Բօստրէմը, նաւերի հրամանատարներ Տրէգուբօվ և Կլիւպֆել և այլ երեք պաշտօնեաներ։

ԵԿԱՏԵՐԻՆՈՍԼԱՒ։ Նաւահանգստում գտնվեց անծուխ վառօդի ու փամփուշտների պահեստ։ Կալանաւորվեց մի չերքեզ։

6 նոյեմբերի

ԼԻՕՆ։ Պարիզից Մարսէյլ գնող պօստային գնացքը, որ տանելիս է եղել արժէքաւոր փաթեթներ ու դրամ դէպի Հնդկաստան և Հեռաւոր Արևելք, կողոպտվել է։

ԿԵԼՑԻ։ Արտասահմանից եկող գնացքի մէջ, Օլկուշ կայարանի մօտ, երկու չարագործ՝ վաճառական Ալէքսանդրովիչին հրել են արտաքնոցը, կապել են նրան, խեղդել են և, յափշտակելով նրանից 1,800 ռուբլի, գնացքից դուրս են թռել ու անյայտացել։

ՊԱՐԻԶ։ Լուբէի նախագահութեամբ և զինւորական մինիստրի ներկայացուցչի մասնակցութեամբ բացվեց Ֆրանսիայի մարմնամարզութեան ընկերութիւնների դաշնակցութեան կօնգրէսը, որ միացնում է 1000 ընկերութիւններ 300.000 անդամներով։

Գաղութների մինիստրութեան մէջ տեղեկութիւն է ստացվել, որ Հարաւային Չինաստանում սպանվել են 3 ֆրանսիացի օֆիցէր գիտական արշաւախմբից, որ Ֆրանսիայից Չինաստան էր մեկնել 1910 թւին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմերային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ **արագ № 2 գնացքը**՝ (I, II և III կարգի վագօն.) 10 ժ. 20 ր. առաւ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 44 ր. կէսօր., Գանձակ՝ 3 ժ. 18 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 52 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 35 ր. երեկ., Բագու՝ 11 ժ. 43 ր. գիշ.։ **Մարդատար № 6 գնացքը**՝ (միայն I և II կարգի վագօն.) 3 ժ. 33 ր. ցեր., Աղստաֆա է հասնում 6 ժ. 29 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 46 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 53 ր. գիշ., Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 20 ր. գիշ., Բագու՝ 8 ժ. 11 ր. առաւ.։ **Պօստատար № 4 գնացքը**՝ (բոլոր կարգերի վագօններով) 11 ժ. 18 ր. գիշ., Աղստաֆա է հասնում՝ 2 ժ. 12 ր. ցեր., Գանձակ՝ 5 ժ. 29 ր. առաւ., Եւլախ՝ 7 ժ. 30 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 12 ժ. 01 րօպէին կէսօրվայ, Բագու՝ 4 ժամ 52 րօպէին ցերեկվայ։ **Խառն № 106 գնացք**՝ (IV կամ III կարգի վագօններով, երբ կարևորութիւն պատահի) 6 ժ. 32 ր. առաւ., Աղստաֆա է հասնում 10 ժ. 42 ր. առաւ., Գանձակ՝ 2 ժ. 57 ր. ցեր., Եւլախ՝ 6 ժ. 25 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 16 գիշ., Բագու՝ 7 ժ. 12 ր. առաւ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **Մարդատար № 74/75 գնացքը**՝ (բոլոր կարգի վագօններով) 11 ժ. 48 ր. գիշ., Կարաքիլիսա է հասնում 7 ժ. 01 ր. առաւ., Ալէքսանդրօպօլ՝ 10 ժ. 31 ր. առաւ., Էջմիածին կայար.՝ 3 ժ. 45 ր. ցեր., Ուլուխանլու՝ 4 ժ. 12 ր. ցեր.։ (Առանց Երեւան մտնելու։ Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը Երեւան ուղևորվում է 4 ժ. 37 ր. ցեր., և Երեւան հասնում 5 ժ. 20 ր. երեկոյեան)։ Նախիջևան՝ 9 ժ. 26 ր. երեկ., Ջուլֆա՝ 11 ժ. 10 ր. երեկ.։ **Մարդատար-ապրանքատար № 78/79 գնացքը**՝ 5 ժ. 34 ր. երեկ., Կարաքիլիսա է հասնում՝ 12 ժ. 48 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 32 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 4 ժ. 41 առաւ., Երեւան՝ 11 ժ. 06 ր. առաւ., և այլևս դէնը չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ **Մարդատար № 5 գնացքը**՝ (բոլոր կարգի վագօններով) 5 ժ. 45 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 51 ր. եր., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առաւ., **Պօստատար № 3 գնացքը**՝ (բոլոր կարգի վագօններով) 9 ժ. 50 ր. առաւ., Միխայլօվօ է հասնում 1 ժ. 56 ր. կէսօր., Բաթում՝ 11 ժ. 13 ր. գիշ.։ **Մարդատար № 7 գնացքը**՝ (II և III կարգի վագօններով) 10 ժ. 38 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. 08 ր. գիշ., Բաթում՝ 1 ժ. 42 ր. կէսօրին։

ԲՈՐԺՈՄ՝ **մարդատար № 9/66 գնացքը**՝ (բոլոր կարգի վագօն.) 3 ժ. 23 ր. ցեր., Գօրի է հասնում 6 ժ. 02 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 02 ր. գիշ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ **Մարդատար № 5 գնացքը**՝ 5 ժ. 07 ր. երեկ.։ **Պօստատար № 3 գնացքը**՝ 8 ժ. 54 ր. առ.։ **Արագ № 1 գնացքը**՝ 9 ժ. 56 ր. գիշ., որը այլևս դէնը չէ գնում։ **Խառն № 107 գնացքը**՝ 9 ժ. եր.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պօստատար № 72/73 գնացքը**՝ 8 ժ. 25 ր. առաւ.։ **Մարդատար-ապրանքատար**՝ № 80/81 **գնացքը**՝ 1 ժ. 40 ր. ցերեկվայ։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **Մարդատար № 6 գնացքը**՝ 2 ժ. 50 ր. ցերեկ., **Պօստատար № 4 գնացքը**՝ 10 ժ. 28 ր. գիշ.։ **Մարդատար № 8 գնացքը** 5 ժ. 33 ր. առաւ. (այս գնացքը Բագու չէ գնում)։

ԲՈՐԺՈՄԻՑ՝ **Մարդատար № 6/10 գնացքը**՝ 7 ժ. 58 ր. առաւօտեան։

Ծանօթութիւն.—Ձմերային երթևեկութեան միջոցին որոշված է Թիֆլիսից Պետերբուրգ (յետ և առաջ) անմիջական, առանց վագօն փոխելու հաղորդակցութիւն՝ Բագու-Րօստօվ-Խարկօվի վրայով Անդրկովկասեան գծի արագ №№ 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է մէկ միքստ վագօն I և II կարգի և մէկ վագօն III կարգի. բոլոր տեղերը պլացկարտներով են։ Նոյնպէս հաստատվում է Թիֆլիս-Մօսկվա յետ և առաջ, առանց վագօն փոխելու, հաղորդակցութիւն՝ Բագու-Րօստօվի և Կօզլօվի վրայով՝ արագ № 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է Միջազգային ընկ. մէկ միքստ վագօն I և II կարգի, որի համար վերցվելու է յաւելեալ արժէք. ամեն մէկ հազար վերստին 8 ր. I կարգում և 6 ր. II կարգում։ Թիֆլիսից-Մօսկվա հաշվում է 2877 վերստ։ Առանց վագօն փոխելու հաղորդակցութիւնը Թիֆլիս-Բագու-Րօստօվ յետ և առաջ կատարվելու է արագ № 1 և 2 գնացքներով։ Բոլոր կարգերի տեղերը պլացկարտով են։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՍՐՍԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9—10 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներւային։
Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՐԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզաձև. հ.։
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՃԱՑ—12½—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Փ. Տ. ԳՈՒՐԳԷՆՕՎ—1—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՃԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
3. 0—113

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱՒՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս եւ վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւօտեան ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմիօնօվսկայա փողոց, № 16.
Տէլէֆօն № 40.
(Ե.ու.կ.) 220. 100—96

ԲԺԻՇԿ
Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագիտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)
Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը։
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէբուտօվսկայա, № 66.
(ա.օ.) 1035. 100—11

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամօքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067.
(ա. օ.) 669. 100—64

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Մասնագէտ **սիֆիլիս (606), միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։**
Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ առ. ժ. 9—10-ը։
Սօլօլակ, Բեբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի)։ Տէլէֆօն № 1175.
(Ե.Տ.կ.) 888. 100—26

ԲԺՇԿՆ. ՖԷԼԴՇԷՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Սրսկումն, լուացումն, մասսաժ, էլեկտրականութիւն, մարմնամարզութիւն։ Հիմնաւոր բժշկութիւն սուր և խրօնիքական տրիպերի, սեռական թուլութեան, անկարողութեան և սերմնահոսութեան—ցոյց է տալիս հմուտ մասնագէտ բժիշկների։ Օտարերկրեայ հիւանդներին տալիս է խորհուրդներ և բժիշկների հասցէներ։ Կարելի է ստանալ իմ կազմած «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարանը», գինը 50 կոպ., ճանապարհածախս՝ 15 կ.։ Հասցէս. Тифлисъ, Семеновская ул., № 9. Ընդունելութիւնը 3—5 ժամը երեկոյեան։
(Ե.Տ.կ.) 892. 50—24

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԵՐՁԱԿ
ԼԵՒՈՆ ՃԵՊԷԵԱՆՑ
ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է
Դվօրցօվայա փողոց, Վրաց Ազնուական. Բանկի շինութեան բակը, թատրոնի մօտ։
(Ե.հ.) 1064. 6—1

ՅՈՎՀ. ԱՐԱԲԱՋԵԱՆ
ՈՍԿԻ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Յովհ. Արաբաջեան
«Ոսկի այբբենարան»
Александрополь.
О. А. Арабаджіану
POTTER

(օ. մ.) 1046. 5—3

ՆԿԱՐԻՉ
ԱՌԱՔԵԼ ՍԱԳԻՆԵԱՆՑ
(Նախկին ուսուցիչ Գէորգեան ճեմարանի և էջմիածնի նկարիչ)
Ընդունում է զուտ հայկական ճաշակի՝ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐԻ, ԽԱՉՎԱՌՆԵՐԻ, ԽԱՉԿԱԼՆԵՐԻ, նոյնպէս և ՊՕՐՏՐԷՏՆԵՐԻ ու ԴԵԿՕՐԱՑԻԱՆԵՐԻ պատուէրներ նպաստաւոր պայմաններով։ Հասցէն՝ Тифлисъ. Красильная ул., ограда церкви св. Георгія (на Майданѣ).
(ա. օ.) 1047. 14—5

Լոյս տեսաւ
Մ. ՉՄՇԿԵԱՆԻ
1912 Թ.
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
Վաճառվում են Կովկասի քաղաքների նշանաւոր գրավաճառանոցներում և Թիֆլիսի յայտնի խանութներում։ Մեծ քանակութեամբ ցանկացողները, ժամանակին ստանալու համար, թող վաղօրօք ուղարկեն իրանց պատուէրները։ Վերադիր վճարով ոչ ոքի չեն ուղարկվում։
Հասցէն՝ Թիֆլիս, Գարայեվսկի № 5.
МАКАРУ ЧИМИШКЯНУ—Մ. ՉՄՇԿԵԱՆ
(կ.ե.) 1036. 10—4

ԾԱԽՎՈՒՄ Է
Մ Ե Ղ Ր
Ս. Մխիթարեանի մեղուանոցից
Ֆունտը՝ 25 կ.։ Մի քանի պուդ գնողներին՝ զիջումն։
Սերպուխօվսկի պերէուլօկ, № 5. (Օլգինսկայա փողոցի մօտ)։
(Ե.Տ.կ.) 1011. 12—10

ՆՈՐՈՅԹ ԺԱՄԱՑՈՅՑ „ԱՊԱԳԱՅ ՈՍԿԻ“ ԱՆԿԵՐ (ոչ ցիլինդր)



18 քարերի վրա, 3 մասից փականներով։ միայն **5 ր. 75 կ., իսկ բարձր տեսակներ 7 ր. 50 կ., 10 ր. և 12 ր.։ 200 ր. արժեցող ոսկէ ժամաց. փոխարէն ես առաջարկում եմ «Ապագայ ոսկի»** յայտնի մարկայի ժամաց.։ որը իր կազմուածքով և շքեղութեամբ ո ս կ է ժամաց. պակաս չէ. իսկ ժամաց. մեխանիզմի և մետաղի լաւ յատկութեան համար երաշխաւորում եմ 6 տարով։ Այդ ժամաց. լարվում է 40 ժամը մի անգամ, ինքն էլ տ ա փ ա կ ձևի է։
ՈՎ ՏԵՍՆՈՒՄ Է ԱՅԴ ԺԱՄԱՑՈՅՑԸ,
ՀԱՒԱՏՈՒՄ Է, ՈՐ ՆԱ ԱՐԺԷ 200 Ր.։
Այդօրինակ ժամաց. ադամանդ. բաց—**4 ր. 75 կ., 6 ր. և 7 ր. 50 կ.**։
ԻՄ ԽՈՐՀՈՒՐԴԸ. ժամաց. բերել տալ միայն Շվէյցարիայից և Դուք ինձանից ընդմիշտ գոհ կը մնաք։
Ուղարկ. եմ ժամաց. մինչև րօպէները ստուգված, վերադիր վճարով և առանց կանխավճարի։ Ճանապարհածախսի և մաքսի համար աւել հաշվում է **85 կ.**։ Շվէյցար. իսկական նոր ոսկուց շղթաներ՝ 95 կ., 1 ր. 75 կ., 2 ր. 50 կ., 3 ր. 50 կ. և 4 ր. արժող.։ Հասցէն (որը կարելի է կտրել և կպցնել ծրարի երեսին).
ШВЕЙЦАРІЯ.—S-te CROIX, 57.
(Suisse) M. JAKUBOWITZ. С-тъ Круа, 57.
Յ. Գ.—Շվէյցարիա ուղարկվող փակ նամակներին պիտի կպցնել 10 կ., իսկ բաց-նամակներին 4 կ. մարկա։ Պահանջներն ուղղել ռուսերէն լեզւով։ **Նախազգուշացումն.**—Արտատպելու կամ նմանեցնելու դէպքում կը վարվենք ըստ օրինի։ **Միայն Շվէյցարիան** կարող է վաճառել այդօրինակ լաւ ժամացոյցներ այդքան էժան գներով։
(Ե.) (В. 72540) 1065. 4—1

Մօտ օրերում լոյս կը տեսնի, որի առիթով եւ
ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՀԱՅ ԱՆՑԵԱԼԸ“
անունով մեծադիր բարելիեֆի ընդօրինակումների (копія), որի օրիգինալը քանդակված է մարմարիոնի վրա 12 տարվայ ընթացքում և գնահատվում է հազարներ։
Բարելիեֆը, որի երկարութիւնն է 18 վերշ., լայնութ. 13 վ., իսկ հաստութիւնը՝ ½ վ., ներկայացնում է 15 հայ թագաւորների և 5 եկեղեցիների բիւստերը և ս. Էջմիածինը։
Ընդօրինակումները ձուլվելու են ամենաազնիւ տեսակի ալեբաստրից (гипсъ), որով հնարաւոր կը լինի վերարտադրելու օրիգինալի նրբութիւնները իր բոլոր մանրամասնութիւններով։
Այս գործը ամեն մի հայ ընտանիքի առաջնակարգ զարդը կը լինի, որ իր տեսակի մէջ նորութիւն է ոչ միայն մեզանում, այլ և Ռուսաստանում և արտասահմանում։
Բաժանորդագինն է 10 ր., որից 5 ր. բաժանորդագրվելիս, իսկ մնացածը՝ բարելիեֆը ստանալուց։ 10 օրինակ միանգամից պահանջողին 1 օր. ուղարկվում է ձրի։ Ճանապարհի և այլ ծախքերը մեր վրա է։ Բաժանորդագրվել կարելի է միմիայն հեղինակի մօտ հետևեալ հասցէով. Тифлисъ, Карусельный спускъ № 1, Ваагну Степановичу Демирчоглянцу.
(Ե. ու.) 986. 10—9

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ՈՒՂԻՂ ԵՒ ԴԻՄԱՑԿՈՒՆ ԺԱՄԱՑՈՅՑ!
Ուրիշ էժան ժամացոյցների տեղից մի ընկնէք։
Լաւ ժամացոյցը միշտ իր արժէքն ունի
ՊԱՐԻԶԻ ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՅԹ.



Ժամացոյց «Խրօնօմետր» սիստ., 200 ր. արժէցող ոսկէ ժամաց. փոխարէն՝ առաջարկում եմ 5 ր. 25 կ.-ով։ «Խրօնօմետր» սիստ. ժամաց., որը իր ձևով և գեղեցկութեամբ յետ չէ մնում ոսկէ ժամաց., իսկ նրա մեխանիզմի և մետաղի լաւ յատկութեան համար «Խրօնօմետր» ժամացոյց երաշխաւորութ. 10 տարով։ Այդ ժամաց. Շվէյցարակ. իսկական նոր ոսկուց է՝ ադամանդով կամ կանանց—3 հատ կափարիչով, լարումը գլխի կողմից 40 ժամը մի անգամ 15 քարի վրա։ Տափակ, համաձայն նկարի. շատ տարածված են և մեծ քանակութեամբ ծախվում են ամբողջ Եւրոպայում։ Գինը 5 ր. 25 կ., 2 հատը՝ 10 ր., 4 հատը՝ 19 ր. 50 կ.։ Գները նշանակված են էժան, որպէսզի ամենքին հնարաւորութիւն տրվի օգտվելու այս ժամացոյցով։ Պատուէրները ուղարկվում են վերադ. վճար. **առանց կանխավճարի**։ ՁՐԻ ուղարկվում է ամեն մի ժամաց. հետ պարիզեան գեղեցիկ երկփեղկ շղթայ իսկակ. նոր ոսկուց բրելօկով և զամշէ քսակով ժամաց. համար։ Ժամաց. ուղարկվում է մինչև րօպէն ստուգած 6 տարվայ երաշխաւորութ.։ Առանց ռիսկի, եթէ ապրանքը չը հաւանէք, փողը յետ ենք վերադարձնում։ Ճանապարհածախս մաքսի հետ միասին 40 կ. (Սիբիր 75 կ.)։ Հասցէն կարելի է կտրել և կպցնել բաց կամ փակ նամակին։
Берлинъ Berlin 91 I. Strumfeld. Kloster str. 42.
Պատուէրների համար կարող էք գրել ամեն լեզւով. փակ նամակին կպցնել 10 կ., բաց նամակին՝ 4 կ. մարկա։
(В. 60002) 872. 7—4

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.